# Ազգ
Azg

7 ՄԱՐՏ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 33(5116)

ISSN: 1829-1651


## Գուլուզադեի «գունավոր երազանքը» եւ ադրբեջանական իրականությունը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի քաղաքագիտական հանրությունը, եթե այս ձեւակերպումը հարիր է մարդկանց այդ խմբին, համակ ուշադրությամբ եւ «խոշորացույցով զինված» ահա մի քանի օր է, ինչ «անատոմիական քննության է ենթարկում» նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ Սերժ Սարգսյանին հղած Բարաք Օբամայի ուղերձը։ Նրանք հիմնականում մտասեւեռված են ԱՄՆ նախագահի այն մտքին, որ Վաշինգտոնը «կշարունակի ղարաբաղյան հակամարտության կարգավորման ջանքերը» եւ որ «հարկավոր են բովանդակային քայլեր՝ հասնելու տեւական խաղաղության եւ անվտանգության»։

Ադրբեջանական քաղաքագիտական մտքի «նահապետ», 1991-99թ.թ. երեք նախագահի օրոք արտաքին քաղաքական հարցերով պետական խորհրդականի պաշտոն զբաղեցրած Վաֆա Գուլուզադեն մասնավորապես կարծում է, որ «նշված հարցում (ղարաբաղյան կարգավորման- Վ. Ա.) ԱՄՆ դիրքորոշումը միանշանակ է»։ Այն է՝ «Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության ստորագրման (՞- Վ. Ա.) եւ Թուրքիայի՝ Հայաստանի հետ սահմանի բացման դեպքում Հարավային Կովկասը կատարելապես կանցնի Արեւմուտքի վերահսկողության տակ։ Ամերիկան (՞- Վ. Ա.) իր քաղաքական բանակցություններում (նախկին պետխորհրդականի կողմից «գերազանց» ձեւակերպում է- Վ. Ա.) նշում է ղարաբաղյան հարցի կարեւորությունը եւ հակամարտության ռազմական լուծման անթույլատրելիությունը» (տես http://haqqin.az/news/4275)։

Նա գտնում է, որ ԱՄՆ-ը «պատերազմի կողմնակից չէ, եւ վաղ թե ուշ առաջատար գերտերության կամքն այդ հարցում (ղարաբաղյան կարգավորման- Վ. Ա.) կխաղա իր դերը»։ Ըստ Գուլուզադեի, «հայերը նույնպես հասկանում են այդ մեսիջը եւ գիտեն, որ Արեւմուտքի եւ Եվրոպայի հետ համագործակցությամբ ունեն զարգանալու հնարավորություններ»։ Նախկին պետխորհրդականը չի զլացել մի ակնարկ էլ Ռուսաստանի հասցեին անել՝ նկատել տալով, որ «բնականաբար մեր (Ադրբեջանի- Վ. Ա.) եւ հայերի հարաբերությունները Ռուսաստանի հետ կմնան նույնը»։

Տես էջ 8

## ԲՀԿ-ն դեռեւս քաղաքական իրավիճակի գնահատական չի տալիս

ԲՀԿ կենտրոնական գրասենյակում տեղի ունեցած քաղխորհրդի ընդլայնված նիստից երեկ մամուլը արտահոսքեր էր արել, որոնք մտածելու տեղիք են տալիս։

Խորհրդարանական ընտրություններում բավական քվե հավաքած, խորհրդարանի թվով երկրորդ կուսակցության եւ նախագահական ընտրություններին չմասնակցած ուժի ղեկավարից ամիսներով առանց միջնորդության տեղեկություն չունեցող հանրությունը ԲՀԿ քաղխորհրդի նիստի՝ «Կենտրոն» հեռուստաընկերությամբ հեռարձակված տեսանյութում հավանաբար որոնեց քաղաքական օդում առկա շատ հարցադրումների պատասխաններ ու առայժմ չստացավ։ Ներկայացված հատվածում ոչ մի խոսք չկա, թե ինչ են խոսել Ծառուկյանն ու ԲՀԿ-ականները ներկայումս ստեղծված քաղաքական իրավիճակի մասին, եւ անգամ հայտնի չէ՝ պատմե՞լ է նա Րաֆֆի Հովհաննիսյանի հետ իր առանձնազրույցի մանրամասները։ Ըստ մամուլային արտահոսքերի՝ ոչ։ Կամ միգուցե՝ Երեւանի ավագանու ընտրությունների վերաբերյալ տաք քննարկումներից հետո




հետաձգված նիստը, որն ըստ լուրերի շարունակվելու է հանգստյան օրերին, ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ գնահատականներ էլ կպարունակի։

Իսկ ահա նախագահ Սարգսյանի երդմնակալությունից ու կառավարության սպասվող հրաժարականից առաջ քննադատական խոսքեր ուղղվել են կառավարության հասցեին. «Ժողովուրդը մեզնից մեծ սպասելիք ունի, իսկ ամենակարեւորը՝ մեր խոստումներից ու ծրագրերից մենք ոչ մի քայլ ետ չենք կանգնելու», ասել է **Գագիկ Ծառուկյանը**։ Նա խոսել է ժողովրդի վիճակի մասին, եւ որ՝ մարդիկ իրենց աշխատանքով չեն կարողանում իրենց ընտանիքը նորմալ-բարեկեցիկ պահել (դե սա միշտ ասել է նա), ու որ՝ այդ մարդիկ «կոտրված, ընկճված ու հուսախաբ՝ երկրից հեռանում են»։

Տես էջ 2

## ԼՂՀ-ի 25-ամյակը ԱՄՆ-ի Կոնգրեսում

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երիտասարդության եւ մշակույթի նախարար Նարինե Աղաբալյանը Մ. Նահանգներ է ժամանելու՝ ամերիկացի օրենսդիրների, քաղաքացիական առաջնորդների եւ համայնքային ղեկավարների հետ Capitol Hill-ում տոնելու Արցախի ազատագրական շարժման 25-ամյակը։ Նա մարտի 13-ին գլխավոր բանախոսն է լինելու Cannon House Office-ի շենքում կայանալիք հատուկ միջոցառմանը, կազմակերպված հայկական հարցերով զբաղվող կոնգրեսական համախմբման կողմից։ Մասնակցելու են միջոցառմանը Մ. Նահանգներում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրասենյակը եւ ամերիկահայ քաղաքացիական կազմակերպությունները։**

**Այս մասին է տեղեկացնում Ամերիկայի Հայ ազգային կոմիտեի (Հայ դատի) գրասենյակից ստացված հաղորդագրությունը։**

Հ. Ծ.

## Բունդեսթագի նախագահը Հայաստանում



**Հայաստանում հյուրընկալվող Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի պատվիրակությունն ու նրա ղեկավար, Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթը երեկ հանդիպումներ են ունեցել Հայաստանի ղեկավարության հետ։ Նախագահ Սարգսյան-Լամմերթ հանդիպման ընթացքում Հայաստանի նախագահը նշել է, որ Հայաստանը շահագրգռված է Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ համագործակցության կայուն եւ շարունակական զարգացմամբ։ Սերժ Սարգսյանը հայ-գերմանական հարաբերությունների առավել խորացման ու ամրապնդման գործում մեծապես կարեւորել է միջխորհրդարանական համագործակցության դերը։**

**Նորբերթ Լամմերթի գլխավորած պատվիրակությունը մարտի 6-ին հանդիպում ունեցավ նաեւ ՀՀ ԱԺ Հայաստան-Գերմանիա բարեկամական խմբի, արտաքին հարաբերությունների եւ եվրոինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների անդամների հետ։**

**Երեկ ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը եւս ընդունել է Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթի գլխավորած պատվիրակությանը։ ԱԺ նախագահը ընդգծել է, որ Հայաստանը հետաքրքրված է ընդլայնել հարաբերությունները Գերմանիայի հետ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձեւաչափերով։**

**Նորբերթ Լամմերթը նշել է, որ Հայաստան կատարած այցը պետք է հիմք դառնա երկկողմ հարաբերությունների խորացման համար։ Նա պատրաստակամություն հայտնեց աջակցելու միջխորհրդարանական համագործակցության ամրապնդմանը, ժողովրդավարացման ներուժի հետագա բացահայտումներին, դրանց զարգացմանը։ Նորբերթ Լամմերթն ասաց, որ իրենք պատրաստ են աջակցելու բոլոր այն երկրներին, որոնք դրա ցանկությունն ու կարիքն ունեն։**

**Անդրադառնալով ԳԴՀ Բունդեսթագում ադրբեջանամետ ուժերի զանգվածային գրոհներին՝ Նորբերթ Լամմերթն ընդգծել է, որ Գերմանիայի խորհրդարանում խորությամբ են քննարկվում Ադրբեջանի ներքաղաքական խնդիրները, որոնք հաճախ քննադատության են արժանանում։**

## «Կանայք, խաղաղությունն ու անվտանգությունը» բանաձեւի քննարկում

Օրերս Նյու Յորքում, ՄԱԿ-ում Հայաստանի եւ Էստոնիայի մշտական ներկայացուցչությունների համատեղ նախաձեռնությամբ, ինչպես նաեւ Հայ օգնության միության ու Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ հրավիրվել էր քննարկում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղությունն ու անվտանգությունը» 1325 բանաձեւի իրականացման հարցով։

Անդրադառնալով Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւի կատարման ընթացքին եւ ապագա մարտահրավերներին ու խոչընդոտներին, բանախոսները կոչ արեցին անդամ պետություններին՝ հստակ քայլեր ձեռնարկել կանանց խնդիրներին լուծումներ գտնելու, «1325 հայեցակարգը» իրագործելու ուղղությամբ։

## «Որ մայրն այլեւս իր որդուն չուղարկի պատերազմ»

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փոխգնդապետ **Աիդա Սերոբյանը** բազմաթիվ մարտի 8-եր եւ նոր տարիներ է անցկացրել ռազմի դաշտում, սահմանին։ «Մենք հույս էլ չունեինք, որ հերթական արկից հետո ողջ կմնայինք, ռազմի դաշտում էինք, որ մյուսների կյանքը փրկեինք։ Մեզանից շատերն իրենց կյանքով խաղաղություն ու նոր կյանք նվիրեցին։ Ես հարգում եմ այն բոլոր տղամարդկանց, ովքեր ռազմի դաշտում էին ու ովքեր կռվեցին, սակայն փաստենք, որ կանանց դերակատարությունն էլ մեծ էր։ Արցախյան պատերազմի ժամանակ 42 կին մարտիկ զոհվեց։ Ու հիմա պատերազմից դասեր քաղած ազատամարտիկս միայն մի բան է ուզում, որ մայրն այլեւս իր որդուն չուղարկի պատերազմ։ Մենք խաղաղության կողմնակից ենք, բայց եթե հարկ լինի՝ նորից կպայքարենք»։



Տիկին Աիդան ու էլի բազմաթիվ ազատամարտիկներ, զինծառայողներ ու զինվորների մայրեր երեկ պաշտպանության նախարարությունում էին։ Նախարար Սեյրան Օհանյանը մարտի 8-ի նախօրյակին կազմակերպել էր միջոցառում՝ հերթական անգամ գովաբանելու ու շնորհակալություն հայտնելու կանանց իրենց ներկայության, գործունեության եւ հայրենասիրության համար։

«Սա ոչ թե կանանց մեկամսյակի մեկնարկ է, այլ տասնմեկամսյակի ավարտ», հայտարարում է պաշտպանության նախարարը՝ շեշտելով, որ հայ հասարակությունում կանայք միշտ էլ արժանացել են հարգանքի ու գնահատանքի։ «Մենք չափից շատ ենք սիրում մեր կանանց, կինը մեծ խոսք է՝ օրիորդի պես անաղարտ, ընկերուհու նման անձնազոհ ու մոր նման սխրագործ։ Մենք մարտական ընկերուհիներ ունենք, ովքեր անձնազոհաբար իրենց կյանքը նվիրեցին այսօրվա խաղաղությանը, եւ նրանք մեզ զրկեցին սխալվելու իրավունքից»։

Տես էջ 2

# ԲՀԿ-ն դեռեւս քաղաքական իրավիճակի գնահատական չի տալիս

*1-ին էջից*

Մարդկանց վիճակից տեղեկանալով՝ պետք է քայլ կատարել, օգնել, մասից փուչ հանել, «քանի որ մարդիկ ձայն են տվել՝ լիարժեք իմանալով, որ այդ ձայնը տեղ է հասնում»: Իհարկե, այստեղ նոր բան չկա, սակայն եթե նկատի առնենք, որ Գագիկ Ծառուկյանի ձայնը վաղուց հանրությունը չէր լսել, ու դա ե՞րբ է ասվում, կարելի է այս խոսքերի մեջ հավասարապես երկու իմաստ էլ փնտրել, հատկապես եթե նկատի առնենք նաեւ իր կուսակիցների հետ հետագա երկխոսության բովանդակությունը նույն տեսանյութում: Առաջին, 4-5 ամիս լռելը կապվում էր նախագահական ընտրությունների հետ, դրանք անցան ու որեւէ անկանոն շարժում չարվեց ԲՀԿ-ի կողմից, իսկ հիմա այլեւս կարելի է վերահաստատել քննադատական կամ այլընտրանքային կեցվածքը, եւ երկրորդ ու ավելի կարեւոր մեսիջը գուցե այն է, որ Ծառուկյանն ու ԲՀԿ-ն, անկախ նրանից, որ Ազատության հրապարակում ուրիշ մարդ է ներկայացնում քաղաքական դաշտի կարեւոր խաղացողը լինելու հայտը, երկրորդ քաղաքական ուժի սեփական հավակնություններն են հիշեցնում եւ հաստատագրում նոր կառավարություն կազմելուն ու անգամ վարչապետի պաշտոնին: Այլապես՝ ինչո՞ւ պետք է **Նաիրա Զոհրաբյանը** խոսեր այն մասին, որ փոքր ու միջին բիզնեսի մեջքն ուղղելու վերաբերյալ իրենց բոլոր օրենսդրական նախաձեռնությունները կառավարությունը մերժել է, ու եթե «ադեկվատ կառավարություն» լինի՝ դրանք վերստին ներկայացվելու են: Ծառուկյանն էլ իր խոսքում է նշել, թե ԲՀԿ-ն ստեղծվել է, որ կարողանա մարդկանց օգնել, պրոբլեմները կարգավորել, ու մարդիկ պայման ու հնարավորություն են ուզում ընդամենը աշխատելու եւ ընտանիքը պահելու:

Իսկ ահա այն, թե ինչպես քվեարկեն ԲՀԿ-ականները խորհրդարանում՝ Ծառուկյանը ապսպրում է ԲՀԿ-ականներին թափանցիկ ակնարկներով՝ ուղղված խորհրդարանական գործընկեր ՀՀԿ-ին. «Քվեարկեք այնպես, որ փողոց դուրս գալով լիարժեք կարողանաք մարդկանց երեսը նայել, հպարտ քայլել, ոչ թե տեսնելուց՝ պախկվեք կամ վախենաք խորհրդարանի դռնից դուրս գալ», քանի որ «մենք ծնելու, ոչ էլ արտոնություն ստանալու խնդիր չունենք»:

ԲՀԿ-ական պատգամավոր **Ստեփան Մարգարյանի**՝ Հայաստանից դուրս միջկուսակցական հարաբերությունների ստեղծման առաջարկին ի պատասխան, Ծառուկյանը, հանձնարարելով հատկապես Ջավախքի ուղղությամբ Վրաստանի հետ կապերն ակտիվացնել, ասում է, թե «քանի որ այնտեղ կառավարություն մերոնք են եկել» (՞), «Վրաստանը մեր անմիջական հարեւանն է՝ մեր կապերը պետք է շատ ամուր լինեն»:

Հետաքրքրական է **Վարդան Օսկանյանի** մոնտաժված խոսքի այն հատվածը, թե ստեղծված իրավիճակում կուսակցությունը պետք է հաստատի ժողովրդի կողքին լինելու հանձնառությունը, նպաստելով սահմանադրական ճանապարհով նրա իրավունքների իրացմանը: Սա թերեւս միակ վկայությունն է, որ այդ նիստում ներքաղաքական վիճակի մասին խոսք գնացել է, սակայն այդպես էլ չի հասկացվում, թե ի՞նչ է ասել Ծառուկյանն այդ առթիվ իր կուսակիցներին եւ Օսկանյանի այն ասածին, թե ԲՀԿ-ն պետք է «այսօրվանից քաղաքական պայքարի մեջ մտնի՝ մրցելով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, սկսած Երեւանի ավագանու ընտրություններից, եւ վերջապես ակտիվ ներգրավվածություն ունենա երկրում ընթացող բոլոր գործընթացներին՝ խորհրդարանական եւ արտախորհրդարանական, մասնակցի ազգային-քաղաքական նոր օրակարգի ձեւավորմանը եւ դրա միջոցով երկրում իրավիճակի փոփոխությանը»:

Մանավանդ երեկ **Րաֆֆի Հովհաննիսյանը** Իջեւանում ասել է, թե ովքեր ասում են՝ ժողովրդի կողքին են, ժամանակն է դա ցույց տալու: Արդյոք ինչ-որ պահի ԲՀԿ-ն կարձագանքի՞ այս խոսքին, միգուցե դա տեղի կունենա հենց ԲՀԿ ընդհատված նիստի շարունակության ժամանակ: Ի դեպ, մամուլի արտահոսքերով՝ նիստն ընդհատվել է Երեւանի ավագանու ընտրություններում ԲՀԿ համամասնական ցուցակի վերաբերյալ քննարկումների տաքության պատճառով, որտեղ իբր խոսք է գնացել այն մասին, որ ցուցակը գլխավորի Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Սեդրակ Քոչարյանը: Սակայն ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանը հերքել է, թե այդպիսի առաջարկ է քննարկվել:

Ծառուկյանն էլի է կրկնել այն միտքը, որ ասում էր խորհրդարանական ընտրություններից առաջ եւ անմիջապես հետո, թե՝ «ես պատրաստ եմ կորցնելու ու տուժելու, բայց իմացեք, ձեր այդ հավատը ես չեմ կորցնի, իմ թիմակիցներին թույլ չեմ տա կորցնելու: Ինձ համար կարեւորը ոչ թե քանակն է, այլ որակն է, գաղափարը, ձգտումը, նպատակը եւ գործը, ամենակարեւորը ժողովրդի աչքին նայելն է»:

Հետաքրքրական է, որ ԲՀԿ-ի նախագահին կից առաջարկվել է քաղաքական խորհուրդ ստեղծել, որն ավելի արագ կարձագանքի երկրում տեղի ունեցող քաղաքական եւ այլ գործընթացներին, միգուցե նոր կառույցը կարողանա քաղաքական գործընթացներին իրոք արագ արձագանքել՝ չսպասելով «կոնյաչնիի» նիստերին:

«Ով չի աշխատում՝ կարող է դուրս գալ, քանակը որակ չէ ինձ համար», ասել է ԲՀԿ նախագահը:

**Ս. Խ.**

## Գարնանը Երեւանում կտնկվեն 50 հազար ծառ եւ թուփ

Գարնանը Երեւանում կտնկվեն 50 հազար ծառ եւ թուփ՝ 2012-ի 40 հազարի փոխարեն: Այս մասին երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ **Ավետ Մարտիրոսյանը**: Նա նաեւ տեղեկացրեց, որ ծաղկային տարածքների՝ 2012-ի 6, 5 հեկտարին այս տարի կավելանա եւս կես հեկտար: Հոլանդիայից ներկրվել են ծաղիկներ, որոնք շուտով կտնկվեն Երեւանի վարչական շրջաններում:

Բնապահպանության վարչության պետի հավաստմամբ՝ Երեւանի կանաչապատ տարածքը կազմում է 908 հա, իսկ մեկ շնչին բաժին ընկնող կանաչ տարածքը 8 քմ-ից կհասնի 12 քմ-ի: Ծառատնկման հետ մեկտեղ կանցկացվի նաեւ ոռոգման ցանց՝ ընդհանուր առմամբ մոտ 20 կմ:

Ավետ Մարտիրոսյանը տեղեկացրեց նաեւ, որ այս տարի Երեւանում կբարեկարգվեն 450-460 բակեր՝ եւ նման տեմպերով շարժվելու դեպքում, 3-4 տարուց Երեւանում չբարեկարգված բակեր չեն լինի:

**Ա. Ս.**

## Երիտասարդները կարեւորում են կայունությունը

Ծաղկաձորում գարունը կարծես փոքր-ինչ ուշացել է, եւ գարնան առաջին օրերին այստեղ դեռ ձմեռ է ու ցուրտ: Բայց դա որեւէ կերպ չէր խոչընդոտել, որ Լոռու մարզի 300 երիտասարդներ գարնանամուտը լիարժեք դիմավորեն մեր երկրի գեղատեսիլ այս վայրում. գարունն իրենք՝ երիտասարդներն էին բերել՝ իրենց հոգում, իրենց ջերմությամբ, իրենց խինդ ու ծիծաղով: Եվ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի, Սամվել եւ Կարեն Կարապետյանների ֆինանսավորմամբ անցկացված եռօրյա հերթական հավաք-հանդիպումը գարնան առաջին օրերին իրապես գարնանաշունչ էր, հագեցած երգ ու պարով, բազմաթիվ մրցույթներով ու տարաբնույթ այլ միջոցառումներով, կարեւորը՝ շատ բարձր տրամադրությամբ:

Ինտելեկտուալ մրցույթին հաջորդեց պարանի ձգումը, ապա թենիսի մրցաշարը, նկարչական մրցույթ-ցուցահանդեսը, իսկ ամեն մի օրն ամփոփվում էր երգ-երաժշտությամբ, պարերով ու երիտասարդների կողմից պատրաստված հաճելի անակնկալներով:

Բնականաբար, երիտասարդները չէին կարող անտարբեր մնալ նաեւ երկրում տեղի ունեցող իրադարձություններին, եւ ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար Արտակ Ճաղարյանի հետ հանդիպման ժամանակ երիտասարդները հատկապես միակարծիք էին, որ մեր երկրում անհրաժեշտ է ապահովել առաջին հերթին կայունություն, քանզի հայրենիքը միշտ պետք է ամուր լինի արտաքին բազում մարտահրավերներին դեմ հանդիման: Ա. Ճաղարյանն իր հերթին գոհունակություն հայտնեց, որ գնալով մեր երիտասարդներն առավել կազմակերպված, համախմբված ու հաստատակամ են դառնում, եւ թույլ չեն տալիս, որ իրենց մի քանի անհասներ թելադրեն: «Սեփական հայրենիքում յուրաքանչյուրս ոչ միայն տեր, այլեւ ծառա պետք է լինի. սա Կարապետյանների հավատամքն է, եւ իրենք էլ միշտ առաջնորդվում են այս սկզբունքով»,- նշեց Կ. Կարապետյանի գրասենյակի ղեկավարը:

Մասնակիցները շեշտեցին, որ հատկապես ուսանողների համար առաջնայինն այսօր լիարժեք ու բարձրորակ կրթությունն ստանալն է ու մրցակցային մասնագետ դառնալը:

Երիտասարդները վերադարձան՝ ձեռք բերելով նոր ծանոթություններ, նոր շփումներ, ինչու ոչ՝ նաեւ նոր գիտելիքներ, եւ ամենակարեւորը՝ դրական լիցքեր:

*«Տաշիր» բարեգործական հիմնադրամի մամուլի ծառայություն*

ՄԱՐՏԻ 8-Ի ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

# «Որ մայրն այլեւ իր որդուն չուղարկի պատերազմ»

*1-ին էջից*

Օհանյանը շեշտում է, որ մենք վաղուց ենք հաղթահարել կին-տղամարդ իրավահավասարության պատնեշը: «Կինը, հաճախ մոռանալով իր ընտանիքի, իր բարեկեցությունը, տղամարդու հետ հավասար պայքարել է, մարտնչել, կիսել ծանրագույն դժվարություններ: Արդյոք սխրագործություն չէ՞, որ կինը որդի է ուղարկում՝ հայրենիքի սահմանը պաշտպանելու», ասում է նախարարը՝ հավելելով, որ ինչպես պաշտպանական, այնպես էլ այլ գերատեսչություններում կանանց ներկայությունն իրեն միշտ էլ հաճույք է պատճառում: Նրա հավաստմամբ՝ կանայք ոչ միայն մթնոլորտ են փոխում, այլեւ ստիպում են, որ տղամարդիկ ավելի զուսպ ու կոռեկտ լինեն:




Մանիկ Մարգարյանի երեք որդիները այժմ ծառայում են բանակում: «Այժմ ես միայն իմ որդիների մայրը չեմ, բոլոր զինվորների մայրն եմ ու աղոթում եմ նրանց համար: Զինվորի մայր լինելն ամենամեծ պատվությունն է, որովհետեւ իմ որդուն վստահել են շատ լուրջ գործ՝ հայրենիքի պաշտպանություն», ասում է նա: Նրա ամուսնու՝ «Կեցցե այն Հայաստանը, որ վաղն է գալու» արտահայտությունը դարձել է թեւավոր խոսք:

Մովսես Գորգիսյանն անկախության խորհրդանիշն է: Նրա կինը՝ **Ռուզաննա Գորգիսյանը** խոստովանում է՝ այսօր էլ սիրում է ամուսնուն, ապրում նրանով ու նրա գաղափարներով: «Ես ուզում եմ, որ ուրախությունը ուրախությամբ համադրվի, որ զոհեր, այրիներ ու որդեկորույս մայրեր չլինեն, որ կինն իրեն կին զգա, սիրված ու գնահատված լինի, որ մայրը փառաբանված լինի: Մեր երկիրն այնպիսին լինի, որ որեւէ մայր իր երեխայի հետ նամակով կամ հեռախոսով չհաղորդակցվի: Ուզում եմ՝ մայրերը գոհ լինեն, վսահ լինեն, որ իրենց երեխաներն ապահով, հզոր ու կայացած պետության մեջ են ապրում: Մենք պահանջ ու բողոք ունենք ու դա պետք է բավարարվի: Մենք սպասելիք ունենք, որ որեւէ երեխա երբեք հարցականի տակ չդնի իր հոր նահատակումը, որ որեւէ մեկի մտքով չանցնի՝ արդյոք արժե՞ր: Ուզում եմ՝ երկիրս այնպիսին լինի, որ դրա մասին չմտածենք», ասում է տիկին Ռուզաննան:




Մարտի 8-ի նախօրյակին նախարար Օհանյանը պատվոգրերով, մեդալներով եւ թանկարժեք նվերներով պարգեւատրեց կին զինծառայողներին, ազատամարտիկներին ու զոհված ազատամարտիկների այրիներին՝ այդ կերպ հերթական անգամ փաստելով, որ կատարված սխրագործությունը երբեք չի մոռացվում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

Օրերս մեկնարկեց 12-րդ միջազգային կովկասյան զբոսաշրջային ցուցահանդեսը, որն ուղղված է տարածաշրջանային զբոսաշրջության զարգացմանը:

Այն հնարավորություն տվեց տեղեկանալու զբոսաշրջության զարգացման տարածաշրջանային միտումներին եւ խնդիրներին, ինչպես նաեւ ծանոթանալու այս ոլորտում միջազգային գործարար փոխհարաբերությունների զարգացմանը եւ հեռանկարներին:

# Զբոսաշրջային փաթեթները դեպի Հայաստան թանկացել են 10-20%-ով




Երեկ՝ լրագրողների հետ հանդիպմանը ճամփորդական գործակալների հայկական միության փոխնախագահի Եղիշե Թանաշյանը ցավով ընդգծեց, որ զբոսաշրջային փաթեթները դեպի Հայաստան թանկացել են 10-20%-ով, ինչը մեր տարածաշրջանի երկրների շրջանում Հայաստանը դարձնում է անմրցունակ. «Փաթեթների գների բարձրացման պատճառը սննդի օբյեկտների ծառայությունների թանկացումն է, որն էլ իր բացասական հետեւանքներն է ունենում»:

Այս ամենին զուգահեռ՝ վերոնշյալ գործակալութան նախագահի Սիմոն Խաչատուրյանն ասաց, որ ցուցահանդեսը խթանում է ներգնա եւ տարածաշրջանային զբոսաշրջությունը՝ ցուցահանդեսի շրջանակներում օտարերկրյա տուր-օպերատորների համար ճանաչողական շրջայց կազմակերպելու միջոցով, ինչպես նաեւ բարենպաստ պայմաններ ստեղծել տարածաշրջանային զբոսաշրջային փաթեթների համատեղ մշակման, գովազդման եւ վաճառքի համար, խթանել ներքին (մարզային) զբոսաշրջությունը, տեղեկացնել հասարակությանը, պոտենցիալ հաճախորդներին, մասնագետներին, պաշտոնյաներին եւ մյուս շահագրգիռ կողմերին զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումների մասին եւ ստեղծել ֆորում զբոսաշրջության ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերի համար, Հայաստանի բնակչությանը ընձեռել հնարավորություն արձակուրդները մատչելի եւ որակյալ պլանավորելու համար

Ըստ Ե. Թանաշյանի՝ ներգնա զբոսաշրջության պահանջարկն ավելի մեծ է, քան առաջարկը, ինչը նույնպես նպաստեց հյուրանոցային գների աճին: Հայաստանը ներկայում կարիք ունի նորանոր բարձրակարգ հյուրանոցների, քանի որ հայկական զբոսաշրջային ընկերությունները գրավում են նոր, ավելի վճարունակ շուկաներ:

Այս տարվա ցուցահանդեսին մասնակցեցին ավելի քան 75 կազմակերպություններ, որոնցից 58-ը՝ ՀՀ 11 մարզերից եւ Լեռնային Ղարաբաղից, մյուսները՝ Թուրքիայից, Վրաստանից, Հունաստանից, Եգիպտոսից, Արգենտինայից եւ Արաբական Միացյալ Էմիրություններից, տեղեկացրեց ճամփորդական գործակալների հայկական միության նախագահ Ս. Խաչատուրյանը:

«Անի Պլազա» հյուրանոցի գլխավոր տնօրեն Մկրտիչ Գրիգորյանը, անդրադառնալով օրերս տեղի ունեցած ցուցահանդեսին, ողջունեց այդ քայլը եւ ընդգծեց. «Մեր հյուրանոցը բարձր է գնահատվել ցուցահանդեսում: Ի դեպ, այս տարի մենք հյուրեր ունեինք Թուրքիայից: Հույս ունեմ, որ կապերը կընդլայնվեն ցուցահանդեսի մասնակիցների հետ:»

ԱՄՆ-ի «Ի-Դի-Էմ-Սի» ծրագրի ղեկավար Բռունո Կոռնելիոն էլ իր հերթին նշեց, որ 12 տարիների ընթացքում ԱՄՆ-ի կառավարությունը ֆինանսապես աջակցել է կովկասյան զբոսաշրջային ցուցահանդեսի իրականացմանը Հայաստանում. «Կոմերցիոն առումով ցուցահանդեսն ամեն տարի էլ ավելի լավն է դառնում եւ այդպիսով զարգացման նոր հնարավորություններ է ստեղծվում հայկական կազմակերպությունների համար: Այս տարի մեր աջակցության նպատակն է Երեւան բերել մարզային տուրիստական կազմակերպություններին, եւ ուրախ եմ, որ այս տարի մեծ շարժ եղավ այդ ուղղությամբ: Ընդգծեմ, որ ցուցահանդեսին ներկա գտնվածների մեծամասնությունը կանայք էին, ինչպես զբոսաշրջության ոլորտում աշխատողների 80 տոկոսն են կանայք: Եվ սա մի աստիճան է, որի շնորհիվ կանայք փորձ ձեռք բերելով կարող են դառնալ անհաս ձեռներեցներ:»:

«Ի-Դի-Էմ-Սի» ծրագրի ղեկավարը տպավորված էր Հայաստանում տուրիզմի զարգացման համար ներդրումների քանակով, որոնց մեծ մասը հյուրանոցների համար է ծախսվել:

Եղիշե Թանաշյանն ամփոփելով ասաց, որ 2012-ից ներգնա տուրիզմի պահանջարկը ավելի մեծ էր, քան առաջարկը, այդ իսկ պատճառով էլ տեղի է ունեցել գների աճ: Զբոսաշրջության ոլորտի մասնավոր հատվածի ջանքերի՝ ներդրումների եւ արտերկրում տարատեսակ միջազգային ցուցահանդեսների մասնակցության ու գովազդի շնորհիվ Հայաստանի զբոսաշրջության ոլորտը ներխուժում է վճարունակ շուկաներ:

Միջոցառումն իրականացվում է 1999 թվականից եւ դարձել է զբոսաշրջային օպերատորների եւ զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների հանդիպման եւ գործնական կապերի հաստատման հարթակ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ



# «Փորձում են ոչ թե համակարգ ստեղծել, այլ օգտվել չհամակարգից»

## Ասում է Ռուբեն Հախվերդյանը

**Երգիչ-երգահան Ռուբեն Հախվերդյանի խորին համոզմամբ՝ նախագահական վերջին ընտրություններում ձայների մեծամասնությամբ անցել է Րաֆֆի Հովհաննիսյանը: «Դրանից հետո էլ ինչպե՞ս չընդդիմանա ժողովուրդը», երեկ «Ուրբաթ» ակումբում ասաց Ռուբեն Հախվերդյանը: Իսկ Սերժ Սարգսյանի վերաբերյալ նրա դիտարկումն այն է, որ Սերժ Սարգսյանը որպես քաղաքական գործիչ կայացել է Խորհրդային Ադրբեջանում, եւ օգնականն էր Կեւորկովի, որի պատճառով Խորհրդային Միության ժամանակ հայաթափվեց Ղարաբաղը. «Եվ այդ ժամանակ Սերժ Սարգսյանը ֆաշիստ Կեւորկովի աջ ձեռքն էր, օգնականը, իսկ Կեւորկովը ադրբեջանցիների կողմից նշանակված մարդ էր, հայ ազգի դահիճը»:**



**Որ գործող նախագահը ներդրում ունեցել է Ղարաբաղյան ազատամարտում, Ռուբեն Հախվերդյանը չի ժխտում. «Ներդրում ունեցել է մեր ամբողջ ժողովուրդը, Սերժ Սարգսյանն էլ, անշուշտ, եւ նա կոռուպցիայի մեջ նույնպես ներդրում ունեցել է»: Սակայն Սերժ Սարգսյանի գալուց հետո, ըստ երգչի, մեզանում սարսափելի գործացավ քաղաքային մշակույթը, կոչումներ ստացան մարդիկ, որոնք այդ կոչումների հետ կապ չունեն: Նույն կերպ առաջ եկան նաեւ բուհերի ռեկտորները: Այս ասելով Ռուբեն Հախվերդյանը նկատի ուներ մասնավորապես Երեւանի թատրոնի ու կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր Արմեն Մազմանյանին, որը վերջերս Ռուբեն Հախվերդյանի հասցեին ասել էր. «Ո՞նց կարելի է տարիներով հաց ուտել մի ձեռքից ու հետո թքել այդ ձեռքի մեջ»: Արմեն Մազմանյանի ասածին ի պատասխան երեկ Ռուբեն Հախվերդյանը ասաց. «Գիտե՞ք ինչու է նա այդպես դոդով պաշտպանում Սերժ Սարգսյանին: Որովհետեւ Սերժ Սարգսյանը թույլ տվեց, որ նա 2,5 միլիոն դոլարով վաճառեր «Թատերական գործիչների միությունը»՝ չունենալով դրանում ներդրում»:**

**Ընդհանուր առմամբ՝ Ռուբեն Հախվերդյանը գտնում է, որ երկրում գնալով անկումային տրամադրություններ են ստեղծվում, կա համընդհանուր արտագաղթ. «Ժողովուրդը դիմացավ մութ ու ցուրտ տարիներին, որովհետեւ հույս ուներ, դիմացան նաեւ Ռոբերտ Քոչարյանին, որը վերջում հարամեց էս ամեն ինչը, սակայն մարդիկ չեն դիմանում համատարած ճնշման այս մթնոլորտին ու զորշությանը»:**

**Լրագրողներից մեկի հարցին՝ որքանո՞վ է բարոյական, որ Ռուբեն Հախվերդյանը աջակցություն է ստանում բոլոր իշխանությունների օրոք, սակայն հետո քննադատում է նրանց հետեւից, Ռուբեն Հախվերդյանը պատասխանեց. «Լեւոն Տեր-Պետրոսյանից ես ոչինչ չեմ վերցրել: 300 հազար դոլար փող եմ վերցրել, որպեսզի բուժվեմ, որովհետեւ այդ ժամանակ, եթե այստեղ որեւէ հայտնի արվեստագետ հիվանդանում էր, ապա նրան թույլ էին տալիս բուժվել ծրի: Ռոբերտ Քոչարյանի օրոք 3-սենյականոց բնակարանի փոխարեն ինձ տվեցին 4-սենյականոց, մի սենյակ ավել չունենայի՞ նվագելու համար: Եթե տալիս են ու տալիս են տեղին, ինչո՞ւ չվերցնել: Բայց եթե մարդը սխալ է անում, չասե՞ս, որ տղա ջան, ճիշտ չես անում: Օրինակ՝ մարտի 1-ը կույ տալու բա՞ն էր: Իսկ Սերժ Սարգսյանից վերցրել եմ 30 հազար դոլար մի ձայնասկավառակի թողարկման համար»:**

**Ռուբեն Հախվերդյանը նաեւ չհամաձայնեց նոր նախագահ ունենալու վերաբերյալ ասված խոսքին, թե փորձած քանն անփորձ մածունից լավ է՝ ասելով. «Բայց եթե էդ փորձած քանից զարշահոտություն է գալիս, ձեռքդ չգցե՞ս մի հաս տնական անարատ մածուն վերցնես: Բա օլիգարխ նախագահը նորմա՞լ երեւույթ է, երբ նա օլիգարխ է դառնում, նախագահ դառնալուց հետո: Այս երեք իշխանությունն էլ մեղավոր են, որ առաջին հերթին ոչ թե փորձում են համակարգ ստեղծել, այլ փորձում են միանգամից օգտվել այս չհամակարգից»:**

Ի. Պ.

# Գյումրի. Հին գերեզմանները ոտնձգությունից զերծ պահելու մտահոգությամբ

Գյումրու քաղաքային հին՝ Հ. 1 գերեզմանոցը, որտեղ թաղումներ են կազմակերպվել սկսած 19-րդ դարից, համարվում է հուշարձան եւ ընդգրկված է Շիրակի մարզի պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում: Այստեղ ի թիվս այլոց ամփոփված են Սբ Ամենափրկիչ եկեղեցու կառուցող վարպետ Թադեոս Անտիկյանի, երգահան Տիգրանյանների եւ Մելիք-Աղամալյանների, գարեջրի գործարանի հիմնադիր Ծաղիկյանների գերդաստանների անդամների, առաջին հայ ազգային-ազատագրական «Բարենպաստակ» խմբակի հիմնադիր Արսեն Կրիտյանի, Պոլոզ Մուկուչի, մեծ փիլիսոփա Գեորգի Գյուրջիեւի հոր՝ Աշուղ Ադաշի, այլ նշանավոր գյումրեցիների աճյունները:

Որպես հուշարձան, սա վաղուց փակ գերեզմանոց է համարվում եւ այստեղ նոր թաղումներն ու «ժամանակակից» վերակառուցումներն արգելված են: Սա՝ օրենքով: Իսկ ահա պատմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայության պետ, գյուրջիեւագետ, պատմաբան Ավետիք Մելիք-Սարգսյանի վկայությամբ՝ գերեզմանոցի վիճակը պատշաճ վերահսկողության բացակայության պատճառով բավական անմխիթար է, եւ ոչ միայն: Ծառայության պետը դեռ անցյալ տարի պաշտոնական գրությամբ դիմել է Գյումրու նոր քաղաքապետ Սամվել Բալասանյանին, իրենց կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա մասնավորապես տեղեկացնելով, որ հին գերեզմանոցում պարզինի կերպով ոչնչացվել են հարյուրավոր հին՝ տուֆից գերեզմանաքարեր եւ դրանց տեղում կառուցվել են ավելի մեծ չափերով, բետոնե եւ բազալտ քարով շարված նոր գերեզմաններ: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հրավիրած մամուլի ասուլիսում Մելիք-Սարգսյանի վկայությամբ՝ այդ հին գերեզմանները քանդվում, քարերը կոտրվում են գերեզմանատան պատասխանատուների իմացությամբ, հետո սպասում են մի քանի ամիս, ու եթե տերերը չեն հայտնվում, հին տեղում նոր, մեծ գերեզմաններ են կառուցվում, որն ինքնին հանցագործություն է...

Ինչպես տեղեկացրեց բանախոսը, վերջերս պղծման միջամտություն է կատարված եղել նաեւ Գեորգի Գյուրջիեւի հոր՝ Աշուղ Ադաշի գերեզմանաքարի վրա, որով խաթարվել է հուշարձանի սկզբնական տեսքը: Ըստ ներկայացվածի, անցած աշնանը Գյումրի ժամանած օտարերկրացի գյուրջիեւագետ Վիլյամ Պատերսոնի պատվերով Աշուղ Ադաշի գերեզմանին առանց համապատասխան թույլտվության երկու բազալտե սալիկ է ավելացված եղել, որը հետո չգիտես ում կողմից նորից վերացվել է: Հիմա, Պատերսոնի ներկայացրած բողոքից հետո, այդ գերեզմանի դիտավորյալ ոչնչացման մեղադրանք է ներկայացվում գերեզմանը տարիներ առաջ գտած եւ պահպանած... Մելիք-Սարգսյանին:

Վերջին խնդիրն, իհարկե, կպարզվի: Բայց ծառայության պետը նշում է, թե քաղաքապետին ուղղված իր գրությունից հետո, որում, նաեւ, առաջին գերեզմանոց-հուշարձանի պահպանության ու դրա հետ կապված տարբեր խնդիրների լուծման հարցում համագործակցության առաջարկ էր արել, իր հետ ոչ մի հանդիպում, ոչ մի քննարկում մինչեւ այժմ չի եղել: Այս հուշարձանի պահպանման իր կողմից առաջարկվող ծրագիրը ծառայությունը մտադիր է ներկայացնել Գյումրու ավագանու քննարկմանը:

Գ. Մ.

## Հրապարակախոսություն

# «Լեզուն որ չըլլի, մարդ ինչի՞ նման կ՛ըլլի...»

Խաչատուր Աբովեան

***Հոդվածագիրը՝ Կարպիս (Ռոժե) Ջրբաշյան, ֆրանսահայ գաղութի նահապետներից է, բարերար, մեկենաս, իսկ ամենակարեւորը՝ հասարակության եւ ազգի բարօրության համար ոչինչ չխնայող անձնավորություն: Վանեցիական արմատներով այս անձնավորությունը բնականաբար նաեւ հրատարակագիր է, սակայն գրում է միայն պահի թելադրանքով: Նրա բազմաթիվ հոդվածներ լույս են տեսել հատկապես Անդրանիկ Ծառուկյանի «Նայիրի» եւ Արփիկ Միսակյանի «Յառաջ» թերթերում: Սիրով ներկայացնում ենք նրա հոդվածը՝ ի պէտս համբակաց եւ զարգացելոց:***

Անցեալում, Ֆրանսայի իմաստուն ղեկավարները խստօրէն արգիլած էին շրջանային լեզուների օգտագործումը յանուն ազգային լեզուին անաղարտ պահպանման... Այս խիստ արգելքին հետեւողութեամբ, Պրըթանյի շէնքերու մուտքին դրուած էր ազդարարագիր մը. «Արգիլուած է թքնել եւ պրըթոնէրէն գործածել», իսկ դպրոցներում, երբ միամիտ մի աշակերտ յանկարծ բաց թողնէր տեղական լեզուի մի քանի բառ, իսկոյն կը պատժուէր, կանգնելով դասարանի մի անկիւնում, վզից կախուած մի կօշիկ... կամ էլ նա պարտաւոր էր մաքրել պէտքարանը...

Ազգային լեզուի այդ խելագար պաշտամունքը թոյլ տուեց, որ նախարար Դը Մոնզի կատարէր մի շռնդալից յայտարարութիւն. «Պրըթոնէրէնը պէտք է անհետանայ ի նպաստ ֆրանսերէնի»: Իսկ 1845-ին Մորլէ քաղաքի փոխ-նահանգապետը, խօսքը ուղղելով Ֆինիսթէր նահանգի ուսուցիչներին, կը յայտարարէր. «Ձեզ յիշեցնեմ, պարոնայք, որ կոչուած էք սպաննելու պրըթոնէրէն լեզուն»:

Այնուամենայնիւ հարկ է նշել, որ Ժան Ժորէս, 15 հոկտեմբեր 1911-ին, մի յօդուածով խստիւ ընդդիմացաւ այս տխմար մարմաջին. «Շատ օգտակար մի զբաղում է, երբ մանկութիւնից սկսեալ երեխաները խօսում են մի քանի լեզու: Բաղդատելով ուրիշ լեզուի հետ, նրանք աւելի զգայուն են դառնում հանդէպ գեղեցկութեան, աւելի նկատում են ամէն մէկի իսկական նկարագիրը: Այսպէս, ինչ որ իրողութիւն է բառին համար, իրողութիւն է նաեւ պրըթոնէրէնի համար»:

Այդ թուականից «շատ ջուր է հոսել կամուրջների տակից...»: 1967-ին UNESCO-ն յայտարարեց. «...Փոքրամասնութիւնների լեզուների ուսուցումը նպաստում, հարստացնում է մարդկութեան ընդհանուր մշակոյթը»:

Ահա, վերջերս լսելի դարձան Ժան Ժորէսի յատկանշող մտածումները, ինչպէս նաեւ UNESCO-ի հռչակած տեսակէտը... Ուրեմն անցեալ մարտ ամսի վերջում Ֆրանսայի զանազան քաղաքներում տեղի ունեցան ցոյցեր, պահանջելով վերականգնումը շրջանային լեզուների, նաեւ բողոքելով պետութեան դէմ, որ մնում է անտարբեր հանդէպ 75 փոքրամասնութիւնների լեզուների փրկութեան նկատմամբ (Le Figaro, 26 մարտ 2012):

Աւելին՝ վերջերս նաեւ Ֆրանսայի ներքին գործոց նախկին նախարար Քլոտ Գէան պարզօրէն յայտնեց, թէ ինք սահունօրէն խօսում է Ch'ti բարբառը, աւելցնելով. «Դա իմ ծննդավայրի (Vimy, Nord-Pas-de-Calais) հողի հարազատ բոյրն է»:

Արդ, պէտք է ընդունենք, որ ամէն մի լեզու կրում է մի մտածում, մի խորհուրդ, մի գաղափար, որոնք յաճախ ինքնատիպ արտայայտութիւններ են: Չեն թարգմանւում: Ո՞ր մէկ լեզուն կարող է թարգմանել «կարօտ» բառի հարազատ ապրումը...

Ինչպէս ասել է նշանաւոր գրող Ժոզէֆ Քեսէլը, «Բառերը որպէսզի թռիչք ունենան, կարիք ունեն իրենց բոյնի լեզուին: Ուրիշ լեզուով կորսնցնում են իրենց թեւերը»:

Ընդունուած դասական իրողութիւն է՝ լեզուն, հարազա՛տ լեզուն է, որ ապահովում է ազգի ինքնութիւնը:

Այդ իրողութեան հաւատալով է որ նախանձախնդիր, գիտակից հայեր, ինչպէս Մելգոնեան եղբայրներ, Լեւոն Քելեքեան, Ալեք Մանուկեան եւ ուրիշ ազգայիններ, Սփիւռքում ձեռնարկեցին հայկական դպրոցների կառուցման: 1973 թուին, Ալեք Մանուկեան՝ Փարիզի Դպրոցասէր վարժարանի այցելութեան առթիւ յայտարարեց. «Ո՛չ մի հաստատութիւն չի կրնար փոխարինել հայկական դպրոցը»: Եւ ինչպէ՞ս չյիշել Խաչատուր Աբովեանը. «Ա՜խ լեզուն, լեզուն որ չըլլի, մարդ ինչի՞ նման կ՛ըլլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը, լեզուն ա ու հաւատը: Լեզուն փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր, էլ ընչով կարես ասիլ թէ ո՞ր ազգիցն ես»:

Ամերիկան ազգերի գաղթականների մի խառնարան է, հսկայ մի ձուլարան է, որ լեզուի խնդիր չունի, ոչ էլ ինքնութիւն պահպանելու պահանջ: Սակայն լայնատարած այս հզօր կայսրութիւնը զրկուած է սեփական ազգային արմատներից, չունի իսկ իր հարազատ սեփական լեզուն... Անշուշտ, կարելի չէ անտեսել, որ Ամերիկան աննախընթաց մի ապաստան եղաւ բազմամիլիոն կարօտեալների, քաղաքական փախստականների համար, որոնցից այսօր աւելի քան մէկ միլիոնը՝ մեր ազգից:

Կարծում եմ, որ պարտադիր է նշել նաեւ եզակի մի բացառութիւն. «Դոլարաստան» այս կայսրութեան կից՝ Քանադայի կուրծքին կպած, Սէն-Լորան գետի ափին, Քեպէք նահանգն է, մօտ 6 միլիոն ֆրանսախօս ֆրանսացիներով, մեծամասնութիւնը՝ Վանսէ նահանգից, որոնք գաղթականների շառաւիղներ չեն, այլ մեզ նման վերապրող արմատախիլներ, Ֆրանսայի սփիւռքը, որ ստեղծուեց 1789ի յեղափոխական տարիների հանրածանօթ ջարդերի պատճառով: Քեպէք եղաւ նրանց ապաստանը: Ֆրանսայի այս սփիւռքը 200 տարի ոչ միայն մնաց քրիստոնեայ՝ պահպանելով ֆրանսական աւանդութիւնները, այլ նաեւ անխորտակ ու կրքոտ հաւատարմութեամբ կառչած մնաց մայրենի լեզուին, մերժելով օտար բառերի մուտքը: «Տարոսը» սփիւռքահայերիս եւ հայաստանցիներին...

Սակայն Քեպէքի այս դիմադրող սփիւռքը 200 տարի մնաց անտեսուած Մայր հայրենիք ասպետական Ֆրանսայից... մինչեւ 1969, երբ Մոնրէալի կեդրոնական հրապարակի վրայ՝ ծով բազմութեան առջեւ, զօրավոր Շարլ դը Գոլ կրքոտ ձայնով հռչակեց. «Այստեղ ապրում է ֆրանսացի ժողովուրդի մի հատուած: Կեցցէ ազատ Քեպէքը»: Թնդաց վաղուց սպասուած ուրախութեան արդար փոթորիկ... Քեպէքի ֆրանսացիները հաւատարիմ մնալով մայրենի անաղարտ լեզուին, պահպանեցին իրենց հարազատ ինքնութիւնը որպէս ֆրանսացի եւ ոչ՝ «ծագումով ֆրանսացի»...

***

Վերջերս իմացանք, որ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան (այլապէս ֆրանսերէն անուանեալ UGAB...) նախագահ Պերճ Սեդրակեան, ինչ-որ մի առիթով յայտնած կը լինի, որ «ինքզինք հայ զգալու համար պայման չէ հայերէն խօսիլ»: Այլ խօսքով, եթէ հայ մնալու համար հայերէն լեզուն պարտադիր չէ, ուրեմն հայկական դպրոցն էլ աւելորդ մի ծախս է... Այս ինքնատի՜պ տեսակէտը մասամբ արդարացնում է Պ. Սեդրակեանի յանդո՜գն եւ իրապա՜շտ որոշումը՝ պահպանել Մելգոնեան վրժարանի շէնքը առանց աշակերտութեան...

Դէ ե՛կ, Խաչատուր Աբովեան, ու մի՛ գժուի...

Ինչպէս ասում է հայ բանաստեղծը՝ «Դու իմանում ես ռուսերէն, շատ լաւ իմանում ես անգլերէն, ֆրանսերէն՝ շատ շատ լաւ, բայց չես իմանում քո մայրենի լեզուն՝ աշխարհը քեզի համար մի թարգմանութիւն է»:

Արդ, «թարգմանուած աշխարհին» պատկանող, այսպէս կոչուած «ծագումով հայ»ը շոգեկառք (գնացք) չի նստում, այլ «կը վերցնի», դրամ չի վաստակում, այլ դոլար «կը շինի»... Թէ այդ երանելին «կարող է իրան հայ զգալ», այդ էլ կախեալ է իր երեւակայութիւնից:

**ԿԱՐՊԻՍ ՋՐԲԱՇԵԱՆ**
**Փարիզ**

# Մարտյան մտորումներ



Տարիներ շարունակ մարտ ամիսն ընկալվում էր որպես գարնան, կյանքի սկիզբ, սպասումների անբացատրելի նախաշեմ: Մարտի գալստյանը զուգընթաց հոգիս մի տեսակ ծառս էր լինում, լցվում խանդաղատանքով, անկասելի շատ սիրելու, սիրված լինելու ցանկությունն էր պարուրում, ամենուրեք գույները պայծառանում էին, ավելի գեղեցիկ ու վառվռուն դառնում: Սակայն, ցավոք, 2008-ից այդ զգացումներն աղճատվեցին, տխուր հիշողությունները եկան ու տիրաբար միախառնվեցին, պղտորեցին, մգագույն դարձրին գարունն ու մարտյան հրաշագեղ ընկալումները:

Ամեն անգամ, արդեն, 2008-ից հետո, մի տեսակ անբացատրելի վախով էի անցնում մարտյան փորձաշեմը, ազատ շունչ քաշում խաղաղ ու անկորուստ անցումով, հավատացնում ինձ, որ տեղի ունեցածը թյուրիմացություն էր, պահի ազդեցության ներքո որոշ տաքգլուխների անհաշվենկատ քայլերի տխուր հետեւանք: Իսկ ամեն անգամ մարտիմեկյան զոհերի կամ տուժածների մասին խոսելիս փորձում էի ինձ ներշնչել, որ դա եղել է շատ տարիներ առաջ, յոթ տարի հետեւում եւ մեր իրականությանը որեւէ աղերս անգամ չունի: Հասկանում եմ, մարդը երբեմն ապրում է ուրիշի կամ ինքնաստեղծ հեքիաթներով...

Իսկ այսօ՞ր, 2013-ի մարտին ի՞նչ եղավ, ի՞նչ ենք ուզում իրարից: Ես հասկանում եմ, համենայն դեպս լավ ճանաչելով իմ վաստակաշատ գործընկեր Ռիչարդ Հովհաննիսյանին, վստահ եմ, որ նրա որդի Րաֆֆին ծայրահեղ քայլերի ընդունակ չէ: Գիտեմ, որ նա հայրենասեր է այնքան, որ մեր գարունն ու մարտը նորից չի աղավաղվի: Սակայն զարգացումներին հետեւող յուրաքանչյուր հայ տեսնում է, որ նրա կողքին հայտնվում են մարդիկ, որոնց վարքագծերն այնքան էլ կանխատեսելի չեն: Գաղտնիք չէ, որ մենք դարերի ընթացքում բազմաթիվ ու բազմատեսակ վայրենի ու կիսավայրենի ցեղերի ճնշումների հետեւանքով որդեգրեցինք օտար ափերի նկատմամբ կայուն թուլություն, իսկ վերջին երկու-երեք տասնամյակներին, հատկապես՝ ամերիկասիրություն: Բայց արի ու տես, որ մեզանում այսօր կան մարդիկ, ովքեր փոխարինում են ոչ իրենց հաշվին Ամերիկայում լինելու հնարավորությունն Ազատություն հրապարակի հարթակում լինելու հետ: Ի դեպ, հարթակը, ինչպես լավագույնս նշվել է «**Ազգ**» թերթում վերջերս, չպետք է դառնա անկանխատեսելիների զրուցավայր: Կաթիլներն են միախառնվելով հեղեղ դառնում, հարկավոր է զգույշ լինել: Հարկավոր է նաեւ երբեք չմոռանալ, որ եթե որեւէ արվեստագետի ժողովուրդը սիրում է, ընդունում, մեծարում, նրա դժվար պահին կողքին կանգնում, վիրահատության համար վերջին լուման զոհաբերում, դա դեռեւս իրավունք չի տալիս ասելու բաներ, որոնք վայել չեն իրեն, առավել եւս, ժողովուրդն էլ արժանի չէ դրան:

Ի՞նչ անենք: Մեզ՝ հայերիս դարերի ընթացքում այնքան են տրորել, այնքան են մեզանից խլել, կրճատել մեր հենակետը երկրագնդի վրա, որ այլեւս տալու, կորցնելու հնարավորություն չունենք: Պարզապես աշխարհի հզորները որքան էլ շոյեն մեր գլուխները, փաղաքշեն, սիրաշահեն, որքան էլ հալվեն օտար խորհրդարաններում ու գործիչների բերաններով արտաբերված «հայանպաստ խոսքերից», մենք այլեւս տալու բան չունենք: Ավելի ճիշտ՝ տալու հնարավորություն այլեւս չկա: Ընդհակառակը, այսօր մեզ հաղթանակներ են պետք, որպեսզի գալիք սերունդներին ոչ միայն բան ունենանք թողնելու, այլեւ եկեղեցիների ու խաչքարերի քարակուռ հեքիաթից բացի ժամանակակից տեսքով բերդերի ու ամրոցների, ինչու չէ, նաեւ արքայական պալատների վկայություններով սերունդներ դաստիարակելու հնարավորություն ունենանք:

Մի բան էլ: Արդեն քանի տարի մեր մտավորականությունն ամենացավավոս ու ամենամաքուր հայերենով, մասնագիտական բարձրակարգ տերմիններով գրում, քննարկում է 2008-ի մարտյան իրավիճակն ու փորձում հասկանալ ամենագլխավորը՝ ինչու եղավ, ովքեր արեցին, եւ բացահայտել մեղավորներին: Բայց՝ անարդյունք: Գոնե դասեր քաղենք, գոնե կարողանանք զոհերի հիշատակը հարգենք, նրանց հարազատների ու խեղվածների ցավը հասկանանք, որպեսզի, Աստված մի արասցե, նույն սխալը չկրկնենք: Բայց արի ու տես, որ չնչին բացառությամբ այսօր մտավորականությունը կամ կրկին բարիկադավորվել է, կամ, որ ավելի բնորոշ է նրա մեծամասնությանը, անտարբեր, ամուլ պահվածքով սպասում է: Ինչի՞:

Ժամանակը չէ՞, պարոններ: Էլ ի՞նչ է պետք, որ միակամվենք, հասկանանք իրար, որ հանկարծ կրկին ողբերգություն չունենանք: Մի՞թե պարզ չէ, որ մենք այդպիսի շռայլություն մեզ թույլ տալ չենք կարող: Արդ, ոտքի ելեք, բարձրացրեք Ձեր ձայնը, հօգուտ հասարակության խաղաղության, մեր կյանքի անդորրի:

Ես Մարսից չեմ եկել, ոտքերս էլ ամպոտ չեն, ու լավ գիտեմ մեր իրականությունը: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ մեզանում այսօր սոցիալական, իրավական ու զանազան այլ բնույթի եւ, ամենակարեւորը, հոգեբանական լուրջ դժվարություններ կան, որոնք հնարավոր կլինի հաղթահարել միմիայն միավորվելու, բռունցքվելու դեպքում: Ուրեմն միակամ լինենք, իսկ իշխանություններն էլ իրենց հերթին պարտավոր են նպաստել դրան: Վերջին տարիների ամենաազգավնաս երեւույթն արտագաղթն է, որի մասին շատ է խոսվում, սակայն ըստ էության արմատական գրեթե ոչինչ չի արվում վերացնելու համար: Վստահ եմ, հայ մարդը երբեք որկրամոլ չի եղել եւ փորի համար չի գնում երկրից ու օտար երկրում երրորդ կարգի փախստական դառնում: Հիմնականում գնում են անարդարությունների պատճառով հայրենիքում հույսը կորցրածները: Հենց այստեղ է, որ մեր իշխանությունները չպիտի բավարարվեն արված քայլերով, բազմաթիվ նոր աշխատատեղեր պետք է ստեղծեն, անարդարություններին պետք է վերջ տան, որպեսզի մեկընդմիշտ այդ ախտն արմատախիլ արվի մեզանում եւ չշահարկվի երբեք:

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**
**ՌԱԿ ատենադպիր**

ԱԶԳ **Միջազգային**

# «Մահվան էսկադրոն» ադրբեջանական բանակո՞ւմ

Ադրբեջանական զինված ուժերում արձանագրվել է հերթական մարդկային կորուստը. «հանկարծամահ է եղել շարքային Էլման Աբիեւը»: Ըստ vesti.az-ի, Աբիեւը «մարտական հերթապահության մեջ էր բարձրլեռնային տեղանքում»: Մեկ ոչ լրիվ շաբաթվա մեջ դա ադրբեջանական բանակում զինվորի «հանկարծակի» մահվան երրորդ դեպքն է:

Բայց` ոչ միայն դա: Հունվարից ի վեր դա նաեւ Ադրբեջանի ԶՈՒ Շամքորի կորպուսում երրորդ պատահարն է: Հունվարի 13-ին «մահացել էր» այդ զորամիավորումներից մեկում արձանագրվել է շարքային զինվորի հերթական մահը:

Շարքային Ջեյհուն Իբադովի «մահվան» առթիվ հանրային քննարկումների ամենաթեժ օրերին Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Գուդրեթ Հասանգուլիեւը հիշեցրել էր ավելի վաղ նույն զորամիավորման 5 զինվորների մահվան փաստը, երբ, սակայն «պաշտպանության նախարարի բարեկամ` կորպուսի հրամանատարն ընդամենը ազատվել է պաշտոնից, մինչդեռ այս դեպքում ականատես ենք հանրային ավելի սուր արձագանքի, եւ նույնիսկ իշխանական լրատվամիջոցներն են բուռն քննարկումներ ծավալել, իսկ կորպուսի հրամանատար Ռովշան Աքպերովը պաշտպանության նախարարի պաշտոնին: Թեեւ քիչ չեն նաեւ նրա մասին տարածվող «կոմպրոմատները»: Մասնավորապես նշվում է, որ Աքպերովը «խոշոր բիզնես ունի Ուկրաինայում»: Կարծիք կա, որ նախկինում նա այդ երկրում «մասնակցել է քրեական «ռազբորկա»-ների` կապված բիզնեսի հետ»: Աքպերովին նույնիսկ մեղադրում են Ուկրաինայում իր ադրբեջանցի «բիզնես մրցակիցների սպանության» մեջ:

2013-ի սկզբից Աքպերովի հրամանատարության զորամիավորման շարքային Ջեյհուն Իբադովը: Դատաբժշկական փորձաքննությունն «արձանագրել էր սրտային սուր անբավարարություն», սակայն զինվորի հարազատներին հաջողվել էր դիահերձարանում լուսանկարել եւ տեսանկարահանել նրա դիակը: Նույն օրն իսկ այդ նյութերը հայտնվել էին համացանցում, ինչին հետեւել էր Բաքվի կենտրոնում անցկացված «Բանակում «ոչ» զինվորի մահվանը» ակցիան:

Մարտի 2-ին Շամքորի կորպուսում «մահացել էր» շարքային Սեյմուր Ալլահվերդիեւը, որի թաղումը Գյոկչայի շրջանի Քյուրդամիշ գյուղում վերածվել էր սկանդալի. զինվորի ծնողները պահանջել էին «բացել ցինկե դագաղը», ինչին ընդդիմացել էր ոստիկանությունը: Ծնողներն սպառնացել էին, որ թույլ չեն տա հողին հանձնել իրենց որդուն, «մինչեւ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն չիրականացվի»:

Ադրբեջանի զինվորական դատախազությունն ստիպված էր եղել Քյուրդամիշ գործուղել դատաբժշկի: Օրվա երկրորդ կեսին զինվորի հուղարկավորությանը մասնակցելու էր գնացել Շամքորի կորպուսի հրամանատար Ռովշան Աքպերովը, եւ «միջադեպը հարթվել էր»: Եվ ահա նույն զորամիավորման ստորաբաժանումպաշտպանության նախարարի պաշտոնից, մինչդեռ այս դեպքում ականատես ենք հանրային ավելի սուր արձագանքի, եւ նույնիսկ իշխանական լրատվամիջոցներն են բուռն քննարկումներ ծավալել, իսկ կորպուսի հրամանատար Ռովշան Աքպերովը պաշտպանության նախարարի բարեկամ` կորպուսի հրամանատարն ընդամենը ազատվել է պաշտոնից, մինչդեռ այս դեպքում ականատես ենք հանրային ավելի սուր արձագանքի, եւ նույնիսկ իշխանական լրատվամիջոցներն են բուռն քննարկումներ ծավալել, իսկ կորպուսի հրամանատար Ռովշան Աքպերովը պատժվել է անհատպաղ»:

Հասանգուլիեւի կարծիքով, դա պայմանավորված է նրանով, որ «Աքպերովը հայտնի է որպես ամենահեռանկարային սպաներից մեկը, ղարաբաղյան պատերազմի մասնակից է եւ համարվում է ՊՆ ամենաբարձր պաշտոնի հավակնորդ»: Համաձայնենք, որ Միլլի մեջլիսի պատգամավորը չափազանց թափանցիկ ակնարկ է արել, թե ինչո՞ւ դժբախտ պատահարներ ավելի շատ տեղի են ունենում Շամքորի կորպուսում:

Ռովշան Աքպերովը ծնվել է Բաքվում 1965-ին: Ռազմական կրթություն ստացել է նախ Ջամշիդ Նախիջեւանսկու անվան ուսումնարանում, ապա` Կիեւում, ծառայել է Աֆղանստանում: Ադրբեջանական բանակում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ: 1994-ի հոկտեմբերի 5-ին Հեյդար Ալիեւի հրամանագրով արժանացել է Ադրբեջանի ազգային հերոսի կոչման: Ադրբեջանական բանակի չափանիշներով, ինչպես տեսնում ենք, Աքպերովն ունի ներկայանալի կենսագրություն: Եվ, որպես «համազգային առաջնորդից» գնահատված, հնարավոր է` կարող է հավակնել պաշտպանության նախարարի պաշտոնին: 

վորման երեք զինվորի «մահվան» փաստը համադրելով Միլլի մեջլիսի պատգամավոր Գուդրեթ Հասանգուլի վերոնշյալ թափանցիկ ակնարկի հետ` կարելի է եզրակացնել, որ խնդիրը «օրինաչափության» հարթությունում է: Այն է` դրանք կազմակերպված սպանություններ են, որպեսզի Աքպերովի ծառայողական առաջխաղացումը խոչընդոտվի:

Ո՞ւմ միջոցով է դա արվում: Ո՞վ է ուղղորդում հանցագործությունները: Պաշտպանության նախարար Աբիե՞ւը, թե՞ կա նաեւ շահագրգիռ երրորդ անձ: Պաշտպանության նախարարի հավանական թեկնածու է դիտվում նաեւ Իլհամ Ալիեւի գլխավոր ռազմական խորհրդատու Վահիդ Ալիեւը: Ըստ էության, ադրբեջանական բանակում գործում են «մահվան էսկադրոն»-ներ, որոնք որոշակի ներքաղաքական իրավիճակի համար պատրաստ են «հանկարծամահ» անել շարքային զինվորներին:

Սա արդեն նողկալի է: «Բանակում «ոչ» զինվորի մահվանը» նախաձեռնող խումբը Բաքվի գործադիր իշխանությանը ծանուցել է մարտի 10-ին անցկացվելիք բողոքի ակցիայի մասին: Գուցե այդ օրը ինչ-որ բան կբացահայտվի՞...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀՌՈՄ

## Վատիկանում մերկացվել է ինքնակոչ եպիսկոպոս



**Հռոմի նոր պապի ընտրության նպատակով Վատիկանում կարդինալների ժողովին հավաքված հոգեւորականների մեջ բացահայտվել է կաթոլիկ եկեղեցու ինքնակոչ եպիսկոպոս: «Դեյլի թելեգրաֆ» թերթը տեղեկացնում է, որ Ռալֆ Նապիերսկին կարողացել էր անցնել շվեյցարացի գվարդիականների պահակակետերից մեկի մոտով, բայց նրան կանգնեցրել էին կարդինալների նիստերի դահլիճի մուտքի առջեւ:**

**Պարզվել է, որ Նապիերսկին Corpus Dei կաթոլիկական ուխտի հիմնադիրն է եւ առաջնորդը: Ըստ երեւույթին, այդ ուխտն իրականում գոյություն չունի: Բացի դրանից, ինքնակոչ եպիսկոպոսը քարոզում է «Հիսուսի յոգա», որի վերաբերյալ նյութեր են ներկայացված YouTube-ի նրա էջում:**

**Մերկացումից հետո նա հայտարարել է, թե ինքը «իտալական ուղղափառ եկեղեցու» ներկայացուցիչ է, ինչպես նաեւ Վատիկանին մեղադրել է մանկապիղծ հոգեւորականների նկատմամբ սխալ քաղաքականություն վարելու մեջ:**

**Համայն աշխարհից եկած կարդինալները մարտի 4-ից Վատիկանում սկսել են խորհրդակցություններ, որոնց արդյունքների հիման վրա մինչեւ մարտի վերջը պետք է ընտրվի կաթոլիկ եկեղեցու նոր հովվապետ: Բենեդիկտոս 16-րդ պապը գահից պաշտոնապես հրաժարվել էր փետրվարի 28-ին, դա պատճառաբանելով իր պատկառելի տարիքով (85) եւ վատ առողջությամբ:**

## ԱՄՆ-ում թույլատրել են օդանավ մտնել դանակով

**ԱՄՆ-ում ներքին չվերթեր կատարող օդանավերի ուղեւորներին 2001-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո առաջին անգամ կթույլատրեն օդանավ մտնել ծալովի փոքր դանակներով: Այդ որոշումն ընդունել է Տրանսպորտային անվտանգության ծառայությունը (TSA):**

**Ապրիլի 25-ից ներքին չվերթերի ուղեւորները կկարողանան ձեռքի ուղեբեռում օդանավ մտցնել 6 սանտիմետրից կարճ եւ 1,27 սանտիմետրից նեղ սայրերով դանակներ (գրչահատներ): Նաեւ կթույլատրվի օդանավ մտցնել բիլիարդի ձողեր, դահուկորդի ձեռնափայտեր, հոկեյի մականներ: Ըստ որում` սովորական դանակների, ածելիների եւ գրասենյակային դանակների արգելքը մնում է ուժի մեջ:**

**Ուղեկցորդների արհմիությունը քննադատել է կանոններում կատարված փոփոխությունները, նշելով, որ դրանք կարող են վտանգ ներկայացնել ուղեւորների եւ անձնակազմի անդամների համար:**

# Չավեսի մահից հետո Վենեսուելայում յոթնօրյա սուգ է հայտարարված

*Նոր նախագահի կընտրվի 30 օրվա ընթացքում*

Վենեսուելայի իշխանությունները հաղորդել են, որ մարտի 5-ի երեկոյան (Երեւանի ժամանակով մարտի 6-ի առավոտյան) մահացել է երկրի նախագահ Ուգո Չավեսը: Նրա օրգանիզմը չի հաղթահարել քաղցկեղային ուռուցքի հեռացման մի շարք վիրահատություններից հետո ծագած բարդությունները: Վերջին 14 տարիներին Վենեսուելան ղեկավարած Ուգո Չավեսը 21-րդ դարի առաջին տասնամյակի ամենավառ անհատականություններից մեկն էր:

Վենեսուելայի կառավարությունը Չավեսի մահվան կապակցությամբ երկրում յոթնօրյա սուգ է հայտարարել: Այդ մասին հայտնում է «Ռոյթեր» գործակալությունը` վկայակոչելով երկրի արտգործնախարար Էլիաս Խաուային:

Արտգործնախարարը հայտարարել է, որ Չավեսի հուղարկավորությունը տեղի կունենա ուրբաթ օրը` մարտի 8-ին: Մինչ այդ հանգուցյալ նախագահի մարմինը կդրվի Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում գտնվող ռազմական ակադեմիայի տարածքում: Կյանքի վերջին երկու շաբաթները Չավեսն անցկացրել էր հիվանդանոցում: «Ֆրանսպրես» գործակալությունը նշում է, որ թաղման վայրը դեռ ընտրված չէ:



Ուրբաթ առավոտյան կայանալիք պաշտոնական արարողությանը հրավիրված են Լատինական Ամերիկայի երկրների մի շարք ղեկավարներ:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ Ուգո Չավեսի մահվան կապակցությամբ Արգենտինայում եռօրյա սուգ է հայտարարված:

Չավեսի մահվան կապակցությամբ արդեն ցավակցություն են հայտնել Լատինական Ամերիկայի փաստորեն բոլոր երկրների ղեկավարները, Կանադայի վարչապետ Սթիվեն Հարփերը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը, ՄԱԿ-ում Ռուսաստանի հատուկ ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը եւ ուրիշներ:

Վենեսուելայում ընդդիմության առաջնորդ Էնրիկե Կապրիլեսը, որը նախագահական վերջին ընտրություններում Չավեսի գլխավոր մրցակիցն էր, նույնպես ցավակցություն է հայտնել Չավեսի կողմնակիցներին եւ համախմբման կոչ է արել երկրի բնակչությանը: Մինչդեռ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ Վենեսուելայի ժողովրդին միայն աջակցություն է հայտնել, հույս արտահայտելով, որ երկրի նոր իշխանությունների հետ կհաստատվեն «կառուցողական հարաբերություններ»: Ընդսմին Օբաման ցավակցություն չի հայտնել:

Վերջին երկու տարիներին Չավեսը պայքարում էր ուռուցքային հիվանդության դեմ: Թեեւ նա միահեծան ղեկավար էր, բայց իշխանության էր հասել համընդհանուր արդարության համար պայքարելու նպատակով: Նա չէր ուզում համակերպվել գոյություն ունեցող կարգերին, որոնց պայմաններում աղքատները էլ ավելի էին աղքատանում, իսկ հարուստները դառնում էին ավելի հարուստ: Ի դեպ, նրան խորթ չէր «բարին պետք է բռունցքներ ունենա» սկզբունքը: Վենեսուելայի նախագահը Վաշինգտոնին քննադատում էր Աֆղանստան եւ Իրաք կատարած ներխուժումների համար, երբեմն էլ մեղադրում հեղաշրջումներ եւ անձամբ իր դեմ մահափորձեր նախապատրաստելու մեջ: Ըստ որում, այդ բոլոր ելույթները, որպես կանոն, ուղեկցվում էին Ջորջ Բուշ կրտսերին հասցեագրված խայթոցներով եւ նույնիսկ վիրավորանքներով: Բարաք Օբամայի նկատմամբ Չավեսն ուներ համեմատաբար զուսպ վերաբերմունք, իսկ Ռուսաստանին ավանդաբար համարում էր բարեկամական երկիր:

Ինչ վերաբերում է «կոմանդանտեի» պաշտոնական իրավահաջորդ, փոխնախագահ Նիկոլաս Մադուրոյին, ամենայն հավանականությամբ նրան չի հաջողվի կրկնել Չավեսի նվաճումը. նրա համեմատությամբ Մադուրոն չափազանց անգույն է:

Վենեսուելայի իշխանությունները հայտարարել են, որ երկրի նոր նախագահի ընտրությունները տեղի կունենան Ուգո Չավեսի մահվանը հաջորդող 30 օրվա ընթացքում: Այդ մասին տեղեկացնում է բրիտանական BBC հեռուստառադիոկորպորացիան: Փոխնախագահ Նիկոլաս Մադուրոն նախագահի պարտականությունները կկատարի մինչեւ պետության նոր ղեկավարի ընտրությունը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Մերժելի վարքագիծ մեր նկարիչների հանդեպ

«Արմենիա» հեռուստաընկերության «Դարը» հաղորդաշարը ծանոթ է շատերին: 2009 թ.-ին ես պատիվ եմ ունեցել լինելու Արտեմ Սարգսյանի վարած այդ հաղորդումներից մեկի հյուրը: Եվ ահա չորս տարվա վաղեմություն ունեցող իմ այդ հարցազրույցը առիթ է տվել Վարդ Սիմոնյանի (Vard Simonian)՝ մամուլում հանդես գալու այնպիսի մի զազրախոսությամբ, որը կշարժեր անգամ ամենամոլի զրպարտիչների նախանձը: Իրեն PR տեխնոլոգ հռչակած այս անձը, առանց հասկանալու, որ իր դիտածը 2009 թ.-ի տեսանյութ է, մեղադրում է ինձ, որ ես իմ հարցազրույցում, խոսելով մեր տաղանդաշատ քանդակագործ եւ գեղանկարիչ Էմիլ Գազազի մասին, շրջանցել եմ նրա արձանագրած հաջողությունը մեկ ամիս առաջ տեղի ունեցած իր անհատական ցուցահանդեսում: Թե ինչպես ես 2009 թ.-ին պետք է լուսաբանեի 2013 թ.-ի իրադարձությունը, թողնում եմ պարսավագրի հեղինակի խղճին: Ես սա ընդամենը զավեշտալի վրիպում կհամարեի, եթե չլինեին գարշանքի զգացում առաջացնող նրա մյուս պնդումները: Վարդ Սիմոնյանն ինձ մեղադրանք է առաջադրում, որ «Արամե» պատկերասրահը իրավական հիմքեր չունի ներկայացնելու եւ վաճառելու Էմիլ Գազազի աշխատանքները: Միայն «գործ տվողին» վայել վարքագիծ դրսեւորելով՝ փորձում է նույնիսկ մեզ ահաբեկել իրավապահ մարմիններով: Կարեւոր եմ համարում շեշտել, որ Վարդ Սիմոնյանը չի էլ փորձել մինչ այդ հրապարակումը խոսել ինձ հետ, իմանալ իմ տեսակետը, վերջապես սեփական աչքերով տեսնել իրեն հետաքրքրող իրավական հիմքերն ու փաստաթղթերը, որոնք բնականաբար կան մեր տրամադրության տակ: Դրանով իսկ սույն լրագրողը խախտել է լրագրողական էթիկայի ամենատարրական նորմերը: Ես վստահ եմ, որ իրենց պարտականություններն ազնվորեն կատարող բազմաթիվ լրագրողներ կարտահայտեն իրենց վերաբերմունքն այս մերժելի վարքագծի նկատմամբ: Բայց ամենահետաքրքրականը դեռ առջեւում է: Պարսավագրի հեղինակ Վարդ Սիմոնյանը, ցուցադրելով իր բացարձակ անտեղյակությունն իր իսկ շոշափած ոլորտին, հայտարարում է, թե «Արամե» պատկերասրահը «Գազազի բրենդի տակ հազարավոր խեղճուկրակ նկարիչների համատեղ ցուցահանդես է կազմակերպում»: Նման պնդում անելու համար բավական չէ միայն զրպարտիչ լինելը, պետք է նաեւ տգետ լինել, անսահման տգետ: Նման պնդում անողը չի հասկանում նույնիսկ իր իսկ օգտագործած հայերեն բառերի իմաստը: «Արամե» պատկերասրահն աշխատում է շուրջ 30 գեղանկարիչների հետ, եւ սա արդեն շատ մեծ թիվ է յուրաքանչյուր մասնավոր պատկերասրահի համար: Ցուցադրվող գեղանկարիչների թվում, բացի Էմիլ Գազազից, կան նաեւ շատ ուրիշ հայ անվանի հեղինակներ, ինչպիսիք են Մահոքյանը, Շաբանյանը, Գառզուն, Ժանսեմը, Կարալովը, Մինասը, Հակոբ Հակոբյանը եւ շատ ուրիշներ: Վարդ Սիմոնյանը այս անունները երեւի չի էլ լսել: Ինչ վերաբերում է երիտասարդ սերնդի մեր շնորհալի նկարիչներին, ապա նրանց խեղճուկրակ անվանելը ոչ միայն վիրավորական է, այլեւ անհասկանալի: Նրանց ոգեւորել է պետք եւ խրախուսել: Նրանք իրենց տաղանդով շատ շուտով նոր բարձունքներ կնվաճեն եւ որեւէ մեկի բրենդի կարիքը բնավ չունեն:

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

# Ցուցադրվել է Ջոն Բերբերյանի արվեստը

Ըստ ստացված հաղորդագրության՝ մարտի 3-ին Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանում (ALMA) բացվել է ամերիկահայ նկարիչ Ջոն Բերբերյանի գծանկարների ցուցահանդեսը: Նրան ճանաչում են բերել հայտնի մարդկանց՝ Վիլյամ Սարոյանի, Լեոնարդ Բեռնստայնի, Յուսուֆ Քարշի եւ այլոց ճշգրիտ ու խոսուն դիմանկարները, որոնք բնութագրվել են որպես «ուժեղ տպավորություն գործող կենդանի ռեալիզմի նմուշներ»: Providence Country Day School վարժարանը հաճախելիս նրան մեծապես օգնել է ու խրախուսել արվեստի դասատուն: Ավարտելուց նա մրցանակ է ստացել նկարչության մեջ «զգայունակության, օրիգինալության եւ գերազանցության» համար: Լինքոլնի դիմանկարի համար մրցանակ է ստացել նաեւ Ուիֆորդի արվեստի ասոցիացիայից: Ռոուդ Այլնդի արվեստի ուսուցման ասոցիացիան առաջին մրցանակ է շնորհել նրան Փրովիդենսի «Կրաուս» պատկերասրահում:

Հ. Ծ.

# Բրիտանական փառատոնի կրթական ծրագիրը

**Բրիտանական խորհրդի, Երեւանում բրիտանական դեսպանատան եւ «Արմենտել» ընկերության կազմակերպած Բրիտանական ֆիլմերի փառատոնի շրջանակում մեկնարկել է կրթական ու երիտասարդական ծրագիրը : Մարտի 4-ին ծրագիրը սկսվել է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում Ալֆրեդ Հիչքոքի «Կենվորը» ֆիլմի ցուցադրությամբ, որից հետո տեղի են ունեցել քննարկում եւ վարպետության դասընթաց միջազգային կինոուղեցույցի խմբագիր Յան Հեյդն Սմիթի մասնակցությամբ: Փառատոնի մյուս ֆիլմերը նույնպես կցուցադրվեն «Թումո» կենտրոնում: Ցուցադրությունը բաց կլինի կենտրոնի սաների համար: Իսկ մարտի 3-11-ը, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի աջակցությամբ, կինոքննադատ Յան Հեյդն Սմիթն անցկացնում է կինոգրախոսության դասընթաց:**

**Բրիտանական ֆիլմերի 11-րդ փառատոնը Երեւանում մեկնարկեց մարտի 2-ից, պաշտոնական ծրագիրը կշարունակվի մինչեւ մարտի 11-ը, այնուհետեւ ֆիլմերը կցուցադրվեն մարզերում ու զորամասերում:**

# Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյան» վեպը՝ Փարիզի գրքի սալոնի հյուր եւ թուրքերի գլխացավանք

Առաջիկա մարտի 21-ին Փարիզի Գրքի սալոնի պատվո հյուրն է լինելու Ռումինիան: Գրքի սալոնի կայքից տեղեկանում ենք, որ ռումին 27 գրողներ ներկայացնելու են իրենց գործերը, որոնց մեջ է Վարուժան Ոսկանյանն իր նշանավոր «Շշուկների մատյան» վեպով: «Շշուկների մատյան»-ը պատմում է Հայոց ցեղասպանության եւ 20-րդ դարի սարսափների մասին. երիտթուրքեր, ֆաշիզմ, ստալինիզմ, գուլագներ, Չաուշեսկու, որոնց թանձր նստվածքը մնացել է մինչեւ այսօր մարդկանց մտքերում եւ հոգիներում:

«Շշուկների մատյան» վեպը լույս է տեսել 2009 թ. Բուխարեստում եւ դարձել հրատարակչական տարվա ամենաբարձր գնահատականի արժանացած եւ ամենաշատ մրցանակներ ստացած գործերից մեկը: Վեպի հրատարակումից ընդամենը երեք ամիս անց, իսպանական Պրե-Տեքստոս (Pre-Textos) հրատարակչությունը ռումինական Պոլիրոմ (Polirom) հրատարակչությունից ձեռք բերեց այն իսպաներեն հրատարակելու իրավունքը:

Իսպաներեն տարբերակը լույս տեսավ 2011 թ. սկզբին Խոակին Գարիգոսի (JoaquinGarriggs) թարգմանությամբ, եւ նույն տարվա օգոստոսին թողարկվեց նաեւ Արգենտինայում, հեղինակի եւ թարգմանչի ներկայությամբ:

Մարկեսյան շնչով գրված վեպը մեծ ժողովրդականություն է վայելում իսպանախոս երկրներում: Վեպի վերաբերյալ Իսպանիայում, Վենեսուելայում, Կոլումբիայում, Չիլիում, Արգենտինայում լույս է տեսել ավելի քան 300 էջ գրախոսություն: Բոգոտայում, Գաբրիել Գարսիա Մարկես գրական փառատոնի կազմակերպիչներն անցյալ սեպտեմբերին որպես տարվա պատվո հյուր հրավիրել էին Վարուժան Ոսկանյանին: Կոլումբիայի նախագահ Խուան Մանուել Սանթոսն անձամբ հետաքրքրված է վեպով, որի ընթերցումը, նախագահի իսկ խոստովանությամբ, նրան օգնում է Կոլումբիական զինյալ հեղափոխական ճակատի հետ (FARC) խաղաղության փնտրտուքի ճանապարհին:

Իտալերենի կողքին 2011 թ. սեպտեմբերին լույս է տեսել նաեւ իտալերեն հրատարակությունը՝ Անիտա Բեռնակիայի (Anita Bernacchia) թարգմանությամբ, Կելլեր Էդիտորե (Keller Editore) հրատարակչատան կողմից:

2012 թ. «Շշուկների մատյանը» հեղինակի միջամտությամբ լույս տեսավ նաեւ Երեւանում, հայերեն՝ որպես երկրորդ բնագիր, եւ Երուսաղեմում եբրայերեն՝ Անի Շիլոնի (Any Shilon) թարգմանությամբ, Հակիբուց Համեուխադ (HakibbutzHameuchad Publishing House Ltd.) հրատարակչատան կողմից:

2013թ. «Շշուկների մատյանը» լույս է տեսնելու նաեւ գերմաներեն Էռնեստ Վիխների (Ernest Wichner) թարգմանությամբ ավստրիական հեղինակավոր Պաուլ Ժոլնայ Paul Zsolnay հրատարակչատան կողմից, շվեդերեն՝ Բոնիեր (Bonnier) հրատարակչական խմբի կողմից:

Վեպը ֆրանսերեն վերջերս լույս է տեսել Սիրտ (Syrtes) հրատարակչության կողմից, Մարիլի լը Նիրի /Marily le Nir ու Լոր Հինկելի (Laure Hinckel) թարգմանությամբ, ինչը իրազեկների գնահատմամբ լավագույններից մեկն է:

Վարուժան Ոսկանյանն արդեն պայմանագիր է կնքել հունգար եւ չեխ հրատարակիչների հետ:




Հայոց ցեղասպանության արխիվներում եւ օտար ափերում վերապրել փորձող հայտարագիրների մասին գրեթե փաստագրական ճշգրտությամբ պատմող այս ցնցող գործն արժանացել է միջազգային մամուլի եւ գրական շրջանակների բարձր գնահատականներին:

««Շշուկների մատյանը» թովչական գեղեցկության վեպ է, հենց ինքնին Պատմությունը»,- գրում է իսպանական Էլ Պաիս (El Pais) թերթը: «Ամենից առաջ Վարուժան Ոսկանյանը հայոց խիղճն է՝ մահից ու վերապրումից հունցված հիշողություն ժառանգած գրող», ավելացնում է վենեսուելական Էլ Նասիոնալը (El Nacional):

««Շշուկների մատյանը» հայ ժողովրդի տառապանքների հիմնը հանդիսացող բացառիկ երկ է»,- իր հերթին վկայում է արգենտինյան Լա Նասիոնը (La Nacion): ««Շշուկների մատյանը» 2011 թ. Աշնանն Իտալիայում հրատարակված լավագույն գիրքն է»,- նշում է իտալական Կորիերե դելլա Սերան: ««Շշուկների մատյանը» հազվադեպ գլուխգործոց է՝ վերջին տարիների համաշխարհային գրականության ամենանշանակալի եւ արժեքավոր ստեղծագործություններից մեկը»,- կարծիք է հայտնում իսրայելական Հաարեցը (Haaretz): Իսրայելում վեպն արժանացավ այնքան մեծ ընդունելության, որ երեք ամսվա մեջ ունեցավ երկու հրատարակություն:

«Այս գիրքն արժանի է, որ աշխարհի բոլոր գրողների կողմից ներկայացվի գրականության Նոբելյան մրցանակի,- Թել Ավիվում անցյալ հոկտեմբերին վեպի ներկայացմանն ասաց Իսրայելի Գրողների միության նախագահ Հերցել Հակակը,- այս մրցանակն արժանին կմատուցի գրողին, որ միաժամանակ հաջողել է ստեղծել ճշմարիտ դասական գրական գործ, ինչպես նաեւ ցնցող ու կենդանի վկայություն տվել հայ ժողովրդի տառապանքների եւ ցեղասպանության մասին: Նման մրցանակը աշխարհի խիղճը կբեւեռի այս աղետի վրա եւ խորություն կհաղորդի այս սարսափելի ոճրագործության ճանաչմանը»:

Հենց այս պատճառով վեպը գլխացավանք է դարձել թուրքական իշխանությունների համար, որոնք բոլոր միջոցներով փորձում են խանգարել դրա թարգմանությունն ու տարածումը: Ռումինիայում Թուրքիայի դեսպանությունը բողոքի նամակով դիմել էր այդ երկրի իշխանություններին, երբ անցյալ սեպտեմբերի 21-ին Բուխարեստի թանգարաններից մեկում «Շշուկների մատյանի» շուրջ կազմակերպվել էր հանդիպում Վարուժան Ոսկանյանի հետ: Հայտնի է դարձել, որ դեռեւս 2009 թ. Անկարան պաշտոնակա միջամտությամբ փորձել է կանխել վեպի ռումիներեն հրատարակումը: Կառավարական եւ դիվանագիտական խողովակներով թուրքերը, որոնց վերջերս միացել են նաեւ ադրբեջանցիները, ճնշումներ են գործադրում տարբեր մայրաքաղաքներում՝ թույլ չտալու Վարուժան Ոսկանյանի մասնակցությունը Փարիզի Գրքի սալոնին: Բանն այն է, որ Ոսկանյանը ոչ միայն հայ է, այլեւ Ռումինիայի ներկա կառավարության անդամ, ուր զբաղեցնում է էկոնոմիկայի նախարարի ծանրակշիռ պաշտոնը:

Մինչեւ ո՞ւր կհասնեն Անկարայի եւ Բաքվի ձեռքերը՝ ազատվելու համար այդ համառ հայի գլխացավանքից: Առայժմ «Շշուկների մատյանը» շարունակում է տարբեր եւ մտքեր գրավել:

*«ԱՐՄԵՆՊՐԵՍ»*

# Մարզական

## Արոնյանը հավակնորդների մրցաշարը կսկսի Կառլսենի հետ մրցախաղով

ՖԻԴԵ-ն անցկացրել է մարտի 15-ին Լոնդոնում մեկնարկելիք շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարի վիճակահանությունը: Լեւոն Արոնյանին բաժին է հասել 1-ին համարը: Իսկ դա նշանակում է, որ հայ գրոսմայստերը մեկնարկային 2 տուրերում խաղալու է սպիտակներով, ինչը լավ նախադրյալ է հաջող մեկնարկի համար: Հենց առաջին տուրում Լեւոնը մրցելու է իր գլխավոր մրցակցի՝ նորվեգացի գրոսմայստեր Մագնուս Կառլսենի հետ: Մարտի 16-ին Արոնյանի մրցակիցը կլինի Բորիս Գելֆանդը:



Հաջորդ տուրերում Արոնյանը կհանդիպի Վասիլի Իվանչուկի, Պյոտր Սվիդլերի, Վլադիմիր Կրամնիկի, Թեյմուր Ռաջաբովի եւ Ալեքսանդր Գրիշչուկի հետ:

Մարտի 24-ին կմեկնարկի մրցաշարի 2-րդ շրջանը: 8-րդ տուրում Արոնյանը սեւերով կմրցի Մագնուս Կառլսենի հետ: Իսկ ավարտական տուրում, որը կկայանա ապրիլի 1-ին, Արոնյանը սպիտակներով խաղալու է Թեյմուր Ռաջաբովի դեմ:

2 շրջանով անցկացվելիք մրցաշարի հաղթողն իրավունք կստանա շախմատային թագը վիճարկելու աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդի հետ: Հավակնորդների մրցաշարին Լեւոն Արոնյանը նախապատրաստվում է Ջերմուկում, որտեղ իր թիմի անդամների հետ ուսումնամարզական հավաք է անցկացնում: Լեւոնը 2-րդ անգամ է մասնակցում հավակնորդների մրցաշարին: Նախորդ անգամ նա քառորդ եզրափակիչում պարտվել էր ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկին ու դուրս էր մնացել հետագա պայքարից: Իսկ հավակնորդների մրցաշարի հաղթող էր ճանաչվել Բորիս Գելֆանդը, որին հետագայում չհաջողվեց շախմատային թագը նվաճել Վիշվանաթան Անանդի հետ մրցավեճում:

## «Շախտյորը» չդիմացավ հզոր «Բորուսիայի» ճնշմանը

**Դոնեցկի «Շախտյորին» չհաջողվեց հաղթահարել չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի արգելքը՝ Դորտմունդում 0-3 հաշվով զիջելով «Բորուսիային»: Դոնեցկում գրանցված ոչ-ոքի (2-2) արդյունքը «Շախտյորին» պարտադրում էր Դորտմունդում ագրեսիվ խաղ ցուցադրել ու անպայման գոլ խփել: Սակայն Հենրիխ Մխիթարյանն ու նրա թիմակիցները չկարողացան դիմադրել գերմանական հզոր թիմի ճնշմանը՝ ստիպված լինելով ավելի շատ մտածել սեփական դարպասի պաշտպանության մասին, ինչը «Շախտյորը» շատ վատ իրականացրեց: «Բորուսիան» արժանիորեն նվաճեց հաջորդ փուլի ուղեգիրը ու կպայքարի գլխավոր մրցանակի համար:**



Հանդիպման մասին **Հենրիխ Մխիթարյանը** հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Կարծում եմ այսօրվա խաղում կրած պարտությունը լավ դաս կլինի մեզ համար, որպեսզի հետագայում չսխալվենք այնպես, ինչպես այսօր էինք սխալներ թույլ տալիս: Այսօր մեր ֆուտբոլիստների մոտ խաղը չէր ստացվում: Ճիշտ է, 2-րդ խաղակեսում մի քանի պահեր ունեցանք, սակայն չկարողացանք իրացնել: Դաշտում աշխատում էինք, սակայն մեր թիմի կազմում չկային այնպիսի բարձրակարգ ֆուտբոլիստներ, ինչպիսիք «Բորուսիայում» են»:

Իսկ մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Յուրգեն Կլոպ** («Բորուսիա»)-Այս խաղը մեզ համար շատ բան էր նշանակում, ուստի ընդմիշտ կհիշենք: Մենք շարունակելու ենք պայքարը: «Շախտյորն» իր ուժը ցույց տվեց 2-րդ խաղակեսում, իսկ մենք մոտ 80 րոպե պարզապես հրաշալի էինք խաղում: Մյուս թիմերի մարզիչները մեզ մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկն են համարում: Եվ ես հասկանում եմ, թե ինչն է պատճառը: Նույնիսկ չգիտեմ, թե հաջորդ փուլում որ մրցակիցն է ավելի նախընտրելի: Մենք պարզապես ուրախ ենք հաջողության համար: Հիանում եմ իմ թիմով:

**Միրչա Լուչեսկու** («Շախտյոր»)-«Բորուսիան» արժանիորեն մտավ հաջորդ փուլ: Այսօր այն ներկայացավ որպես անպարտելի թիմ, որին հաղթելը դժվար էր: Մինչեւ 30-րդ րոպեն մրցակիցը ոչ մի գոլային պահ չստեղծեց: Մենք էլ գոլ խփելու հնարավորություն էինք փնտրում հակագրոհելիս: Սակայն հետագայում «Բորուսիան» անկյունայինի խաղարկումից բացեց հաշիվը եւ մեր ծրագրերը փոխվեցին:

Ընդմիջմանը ֆուտբոլիստներին ասացի, որ պետք է վերակառուցել խաղը: 2-րդ խաղակեսում դա զգացվեց: Կարող էինք գոլ խփել, սակայն չստացվեց: Իսկ ամեն ինչ ավարտվեց մեր դարպասապահի սխալով: Կցանկանայի, որպեսզի «Բորուսիան» մտներ եզրափակիչ: Մեր մրցակիցը շատ ուժեղ թիմ է:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Մանչեսթր Յունայթեդի» եւ Մադրիդի «Ռեալի» պատասխան հանդիպումը: Արքայական ակումբը մինչեւ 66-րդ րոպեն մրցակցին զիջում էր 0-1 հաշվով Սերխիո Ռամոսի ինքնագոլի պատճառով: Ի դեպ, այդ գնդակը չեմպիոնների լիգայում գրանցված հոբելյանական՝ 6000-րդ գոլն էր: Սակայն «Ռեալին» հաջողվեց իրացնել թվային առավելությունն ու ընդամենը 3 րոպեում 2 գոլ խփելով, քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճել: Հաղթական գոլի հեղինակը Ռոնալդուն էր, որը զուսպ նշեց խփած գոլն իր նախկին թիմի դարպասը:

Այդ խաղում «Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպան Ռայան Գիգզը յուրօրինակ հոբելյան նշեց՝ անցկացնելով պաշտոնական մրցումներում 1000-րդ խաղը: Դրանցից 932-ը նա անցկացրել է թիմի մարզաշապիկով, 64-ը՝ Ուելսի հավաքականում, 4-ը՝ Մեծ Բրիտանիայի հավաքականի կազմում Լոնդոնի ամառային օլիմպիադայում:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսին Ալեքս Ֆերգյուսոնի փոխարեն ներկայացավ նրա օգնականը: Ֆերգյուսոնը շատ էր վրդովվել մրցավարի գործողություններից, որը դաշտից հեռացրել էր Նանիին:

**Մայք Ֆելան** («Մանչեսթր Յունայթեդ»)-Կարծում էինք, որ մեր ընտրած մարտավարությունը ճիշտ է: 0-0 հաշվի ժամանակ թիմն իրեն վստահ էր զգում, իսկ գոլ խփելով, ավելի ամրապնդվեց վստահությունը: Սակայն մրցավարը սխալ որոշում կայացրեց՝ հեռացնելով Նանիին: Մենք ստիպված էինք համակերպվել: Շատ դժվար է «Ռեալին» դիմագրավել 10 հոգով: Այսպես մրցավարի մեկ որոշմամբ մեր հիանալի խաղը կազմալուծվեց:

**Ժոզե Մոուրինյու** («Ռեալ»)-Այսօր պարտվեց ավելի ուժեղ թիմը: Մենք շատ վատ էինք խաղում: Սակայն այսպիսին է ֆուտբոլը: Մեզ հաջողվեց օգտվել թվային առավելությունից: Լուկա Մոդրիչի խաղադաշտ դուրս գալը զգալիորեն ուժեղացրեց մեր կազմը: Թեեւ մրցակիցը խաղում էր 10 հոգով, սակայն խաղավերջում մենք դժվարին կացության մեջ էինք: Բայց հիանալի խաղաց մեր դարպասապահը: Այսօր Ֆերգյուսոնը զգում է այն, ինչ տեղի ունեցավ ինձ հետ 2 տարի առաջ «Բարսելոնի» հետ խաղում Պեպեի հեռացումից հետո: Արբեոլան իրոք հարված ստացավ Նանիից: Սակայն կարծում եմ, որ մրցավարը կարող էր բավարարվել դեղին քարտով:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

## Եվրոպայի առաջնության նախապատրաստությունը ծանրորդները սկսում են Ծաղկաձորում

Ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց հավաքականը Ծաղկաձորում սկսում է նախապատրաստությունն ապրիլի 8-14-ը Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Հավաքականի գլխավոր մարզիչ Պողոս Պողոսյանն ուսումնամարզական հավաքի է հրավիրել 8 ծանրորդի: Ծաղկաձորում մարզումներին կմասնակցեն 69 կգ քաշայիններ Վլադիկ Կարապետյանը, Անդրանիկ Կարապետյանն ու Առաքել Միրզոյանը, Տիգրան Կարապետյանը (85 կգ), Մհեր Պողոսյանը (94 կգ), Համլետ Պողոսյանը (105 կգ) եւ գերծանրքաշայիններ Գոռ Մինասյանն ու Հայկ Հակոբյանը:

Ինչպես տեսնում ենք, այս հավաքին հիմնականում երիտասարդ ծանրորդներ են մասնակցում: Հավաքականի մարզիչները մտածում են հերթափոխի եւ թիմում սերնդափոխություն կատարելու մասին:

Ծաղկաձորում անցկացվելիք պարապմունքների ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվելու է մարզիկների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածությանը: Այս հավաքի ավարտից 15 օր անց հավաքականն իր 2-րդ հավաքը կանցկացնի Աբովյանում, որտեղ մարզումների ընթացքում ուշադրություն կդարձվի ծանրորդների տեխնիկայի կատարելագործմանն ու հոգեբանական պատրաստվածությանը: Իսկ ավարտական հավաքը նախատեսվում է անցկացնել Ալբանիայում, որպեսզի ծանրորդները հարմարվեն տեղի կլիմայական պայմաններին:

Առայժմ վաղ է ասել, թե Եվրոպայի առաջնությանը Հայաստանից քանի ծանրորդ կմասնակցի: Մարզիչները կարեւորում են ոչ թե մարզիկների քանակը, այլ ելույթների որակն ու արդյունքները: Ուստի պետք է աշխատեն արդյունավետ օգտագործել յուրաքանչյուր պարապմունք:

Ինչ վերաբերում է մեր փորձառու ծանրորդներին, ապա գերծանրքաշային Ռուբեն Ալեքսանյանն օրերս է վերադարձել Գերմանիայից, որտեղ բուժման կուրս էր անցնում: Նա արդեն լիովին ապաքինվել է ուսի լուրջ վնասվածքից ու շուտով կարող է վերսկսել մարզումները: Երկարատեւ վնասվածքից հետո վերջապես ապաքինվել է նաեւ Գեւորգ Դավթյանը: Սակայն նա չմասնակցեց Հայաստանի առաջնությանը եւ մարզիչներին առայժմ դժվար է կարծիք կազմել Գեւորգի մարզավիճակի մասին: Իսկ ահա Արա Խաչատրյանը վնասվածքից հետո թեեւ բարձր արդյունքներ ցույց չտվեց Հայաստանի առաջնությունում, սակայն Պողոս Պողոսյանը գոհ է նրանից:

## Հայ շախմատիստներից լավագույնը Պետրոսյանի արդյունքն է

Իրանի Ռաշտ քաղաքում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի 7-րդ տուրում Մանուել Պետրոսյանը սեւերով հաղթեց Ասգար Գոլիզադեհին ու վաստակեց 5 միավոր: Մրցաշարին մասնակցող հայ շախմատիստների մեջ սա լավագույն արդյունքն է: 4,5-ական միավոր ունեն Սիմոն Մկրտչյանը, Սեդրակ Մաթեւոսյանն ու Վահե Բաղդասարյանը: Այս եռյակից տուրը հաջող էր միայն Վահեի համար, որը հաղթեց Ալիզադեհին: Իսկ ահա Մաթեւոսյանն ու Մկրտչյանը պարտվեցին համապատասխանաբար Զաուր Մամադովին եւ Արաշ Ռոզհանիին:

Սարգիս Մանուկյանը վաստակել է 4 միավոր: 3,5-ական միավոր ունեն Նորայր Թորոսյանն ու Մարիա Գեւորգյանը, իսկ Արմինե Բաբայանի օգտին գրանցված է 2 միավոր:

Մրցաշարային աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են իրանցիներ Հոմայուն Տուֆիղին եւ Համեդ Մուսավիանը, ինչպես նաեւ ադրբեջանցի Միսրադին Իսկանդարովը:

## Ճապոնիայում վաճառքի է հանվել Մեսիի ձախ ոտքի ոսկե քանդակը

Տոկիոյի ոսկերչական խանութում տեղադրվել է ճապոնացի ոսկերիչ Գինզա Տանակայի մաքուր ոսկուց պատրաստած Լիոնել Մեսիի ձախ ոտքի պատճենը՝ արյունատար անոթների ճիշտ դասավորությամբ: Նախնական գինը 5,25 մլն դոլար է: Գործը կշռում է 25 կգ:

Բացի դրանից, Տանական պատրաստել է քանդակի 100 հատ փոքր պատճենները, որոնցից յուրաքանչյուրի գինը 94,5 հազար դոլար է: Իսկ Մեսիի ոտնահետքը, որը նույնպես ոսկուց է, 42 հազար դոլար է: Այդ քանդակների շնորհանդեսին ներկա է գտնվել Մեսիի ավագ եղբայրը՝ Ռոդրիգոն:




## Նեյմարը նախընտրում է «Բարսելոնը»

Բրազիլիայի հավաքականի եւ «Սանթոսի» հարձակվող Նեյմարը վերջնականապես կողմնորոշվել է իր ապագայի հարցում: Նա որոշել է ֆուտբոլային կարիերան շարունակել իսպանական «Բարսելոնում»: Վերջինս հետաքրքրված է նրա ծառայություններով:

Բրազիլացի տաղանդավոր ֆուտբոլիստին իրենց թիմում տեսնելու ցանկություն ունեն նաեւ Մյունխենի «Բավարիան» եւ «Մանչեսթր Սիթին»: Վերջինս պատրաստ է Նեյմարին խոշոր գումար առաջարկել: Չնայած Նեյմարը ներկայումս տարեկան մոտ 20 մլն եվրո է ստանում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Թող ներողություն խնդրեն նրանք, ովքեր համերաշխություն են հայտնել Սամաթիայի հայերին»

Այդ մասին «Սթարի» մարտի 5-ի համարում գրել է Մուրադ Քելիք-թօղլուն: Նկատի ունի քաղաքացիական հասարակության այն կազմակերպություններին, որոնք Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի, «Ազատություն եւ համերաշխություն» կուսակցության, ինչպես նաեւ «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսի» գլխավորությամբ դատապարտում էին Ստամբուլի հայաշատ թաղամասերում տարեց հայ կանանց դեմ իրականացված հարձակումները, հարձակումներին թուրք իրավապահ մարմինների անտարբերությունը եւ Սամաթիայում հունվարի 26-ին ու 27-ին կազմակերպում հայերի հետ համերաշխության ցույցերը:

Ի դեպ, այդ ցույցերին մասնակցել էին Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների բոլոր ներկայացուցիչները՝ բացառությամբ հրեական համայնքի ու սաբաթայականների, այսինքն՝ սալոնիկյան ծագումով առերեւույթ մահմեդականություն ընդունած հրեաների, որոնք հետնաբեմից կառավարելով երկիրը, որպես կանոն հայերի դեմ են ուղղում թուրք ժողովրդի ագրեսիվ նկրտումները:

Համենայն դեպս, համերաշխության երկու ցույցից եւ հատկապես Մարդու իրավունքների միության ոստիկանությանը ներկայացրած հունվարի 24-ի գրավոր դիմում-բողոքից հետո մինչ այդ անգործության մատնված իրավապահ մարմինները սկսեցին հետաքննել հարձակումները: Նրանք ավելի քան 3 ամիս հետո հայտնաբերեցին ոմն Մուրադ Նազարյանին եւ նրա վրա բարդեցին բոլոր 5 հարձակումների պատասխանատվությունը, չմոռանալով, իհարկե, հարձակումները կրճատել 4-ի, սպանվածներին 2-ից՝ 1-ի, ընդգծելով, որ դրանցից միայն 3-ն են ուղղված եղել հայ կանանց դեմ:

Թուրքական ոստիկանության տվյալներով, Մուրադ Նազարյանը ծագումով հայ է, մահմեդականություն է ընդունել, բայց, չգիտես ինչու, պահպանում է հայի ազգանունը, հաճախում մզկիթ նամազ անելու, սակայն եկեղեցուց օգնություն է ստանում, դեռ ավելին, հիվանդանոցում բուժում ստացած հոգեկան հիվանդ է նաեւ:

Այլ կերպ, Մուրադ Նազարյան անուն-ազգանունը կամ որեւէ առնչություն չունի այդ անձնավորության ինքնության հետ, այսինքն՝ հորինված է, կամ էլ հարձակումները նրան են վերագրում, որպեսզի քողարկեն դրանց ռասիստական բնույթը: Ընդ որում՝ հոգեկան հիվանդի մեղմացուցիչ հանգամանքով, միաժամանակ պաշտպանության տակ են առնում եւ արդարացնում ինչպես հանցագործին, այնպես էլ իրագործած հակահայ հանցագործությունը:

Այս ամենը, սակայն, չի խանգարել «Սթար» թերթի հեղինակին ընդվզելու քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների դեմ, որոնք հարձակումները համարելով ռասիզմի եւ հայատյացության դրսեւորում, պայմանավորել էին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի պատրաստությամբ:

Ահա թե ինչ է գրել «Սթարի» հեղինակը. «Վերջին շաբաթներին, երբ հայկական ծագում ունեցող մեր քաղաքացիներով բնակեցված Սամաթիայում տարեց կանանց նկատմամբ իրար հետեւից իրականացվեցին հարձակումներ, մեր «զգոն քաղաքացիները» առանց մտածելու, թե դրանք կարող են լինել սովորական հանցագործություն, «Բոլորս սամաթիացի ենք» կարգախոսներով ճանապարհ ընկան: Երբեք, բողոքի ցույցեր կազմակերպող այս ընկերները, ըստ որոնց, հարձակումները պայմանավորված էին հայատյացությամբ, «չենք թույլ տալ վարի տալ հայերին» վանկարկումներով փողոցներում ախուվախ արեցին: Մինչդեռ բոլոր հարձակումներն անխտիր գողության միտում են ունեցել: Նրանք, իհարկե, հարկ չհամարեցին կանգ առնել այս վարկածի վրա: Ըստ նրանց, ճշմարտությունը մեկն էր. Լինչի դատաստանի ենթարկել հայերին: Հետո ի՞նչ եղավ: Ձերբակալվեց հանցագործը: Պարզվեց, որ հայկական ծագումով Թուրքիայի քաղաքացի Մուրադ Ն.-ն է: Շատ բարի: Հիմա ի՞նչ անել: Եվ ի՞նչ են անելու քաղաքացիական հասարակության այն կազմակերպություններն ու կուսակցությունները, որոնք բողոքի ցույցերում «բոլորս սամաթիացիա ենք» էին գոռում-գոչում, աշխարհն իրար խառնում: Կարծում ենք, կարիք կա, որ նրանք արդեն «ներողության» ցույց կազմակերպեն:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# «Թուրքական հանրայինը թող հակաքարոզչությամբ արձագանքի ցեղասպանության տարելիցին»

Այդ մասին, ինչպես նշել է Timeturk-ը, մարտի 5-ին թուրքական խորհրդարանում հայտարարել է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Ֆարուք Բալը: Ըստ թուրքական աղբյուրի, պատգամավորն ասել է, որ թուրքական հանրային հեռուստատեսությունը գործում է ժողովրդից գանձված հարկերով, հետեւաբար հանրօգուտ աշխատանքներ պետք է կատարի եւ այս աշխատանքների շրջանակում հեռարձակի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին ուղղված հաղորդումներ:

Նրան ի պատասխան, քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավոր Սուրեյա Օնդերն ասել է, որ այս հեռուստատեսությունը թեեւ գործում է ժողովրդից գանձվող հարկերի հաշվին, սակայն ժողովրդի հոգսերը ներկայացնելու փոխարեն մշտապես դառնում է իշխանության գործիք, ուստի եւ պետք է փակվի:

Հ. Չ.

# Ռուսաստանում ստեղծվել են հատուկ գործողության ուժեր

ՌԴ պաշտպանության նախարարությունը ձեռնարկել է հատուկ գործողությունների ուժերի ստեղծումը: Մարտի 6-ին բանակի գլխավոր շտաբի պետ Վալերի Գերասիմովին վկայակոչելով՝ «Ինտերֆաքս» գործակալությունը հաղորդեց, որ հատուկ գործողությունների ուժերի հրամանատարությունն արդեն կազմավորված է:

Գերասիմովի խոսքերով, Ռուսաստանը հատուկ գործողությունների ուժերի ստեղծմանը ձեռնամուխ եղավ՝ ղեկավարվելով 21-րդ դարի ռազմական հակամարտություններում «աշխարհի առաջատար պետությունների» հաջող փորձով:

Հատուկ գործողությունների հրամանատարություն ստեղծելու նախագիծը պաշտպանության նախարարությանը ներկայացվել էր դեռ 2012-ի հոկտեմբերին, նշում է «Իզվեստիա» թերթը: Սակայն գերատեսչության այն ժամանակվա ղեկավար Անատոլի Սերդյուկովը աննպատակահարմար էր գտել նոր ուժերի ստեղծումը:

Թերթի տեղեկությունների համաձայն, հատուկ գործողությունների հրամանատարությանը պետք է ենթարկվեին մասնավորապես հատուկ նշանակության «Սենեժ» կենտրոնը, զինվորական օկրուգներից մեկի հատուկ ջոկատների բրիգադը, Տորժոկի ուղղաթիռային էսկադրիլիան, ինչպես նաեւ Տվերի մոտ տեղաբաշխված Իլ-76 ռազմափոխադրական օդանավերի էսկադրիլիան:

Ներկայումս հատուկ գործողությունների հրամանատարություններ կան, օրինակ, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում եւ Ավստրալիայում: Նման հրամանատարությունները մասնավորապես զբաղվում են առանձնահատուկ կարեւորություն ունեցող ռազմական, հակաահաբեկչական եւ փրկարարական գործողություններով (այդ թվում՝ Աֆղանստանում): Ռուսաստանում հատուկ գործողությունների իրականացման համար առանձին ստորաբաժանումներ կան զորատեսակներում:

ՔՆՆԵԼՈՎ ՕՐՎԱ ՄԱՄՈՒԼԸ

## ԲՆՆԵԼՈՎ ՕՐԱՄԱՅԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

# Գուլուզադեի «գունավոր երազանքը» եւ ադրբեջանական իրականությունը

1-ին էջից

Թե ի՞նչն է կատաղի հայատյացին մղել՝ «մտահոգվելու» Հայաստանի եւ հայ ժողովրդի զարգացմամբ, թողնենք մի կողմ: Նախկին պետխորհրդականի գլխավոր հորդորն Ադրբեջանին այն է, որ «պետք է սպասել լավագույն ժամանակների, քանի որ ԱՄՆ-ը ԼՂ հարցի ռազմական լուծման կողմնակից չէ»: Ավելի վաղ Գուլուզադեն իր երկրի իշխանություններին ուղղակի կոչում էր «ՆԱՏՕ-ի հետ սերտ համագործակցության» եւ պնդում, որ «Ռուսաստանն է հայերի միջոցով օկուպացրել ադրբեջանական տարածքները»:

Ըստ էության, «այսօր» էլ նա գրեթե նույնն է ասում: Փոխվել է միայն տոնայնությունը: Մեր խնդիրը չէ՝ անդրադառնալ դրա պատճառներին: Հնարավոր է, որ Գուլուզադեն «մտափոխ է եղել» ԱՄՆ պետքարտուղարի հայտարարությունից հետո, ըստ որի «Իրանի հարցում Օբամայի նախապատվությունը տալիս է դիվանագիտական քայլերին»: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանում հույսեր էին փայփայում, թե Իրանի դեմ պատերազմի դեպքում «Արեւմուտքի կրտսեր դաշնակցի իրավունքով» կարող են ԼՂ խնդիրը լուծել «բլից- կրիգի» սկզբունքով:

Որոշակի շրջանակներ, որոնց «տեսաբաններից» է Գուլուզադեն, իշխող վարչախմբին համառորեն փորձում են ուղղորդել միանշանակ արեւմտյան կողմնորոշման եւ դրանում են տեսնում Ադրբեջանին հուզող խնդիրների «արդարացի լուծման միակ հնարավորությունը»: Ի՞նչ երաշխիքներ ունեն նրանք այդպես առաջարկելիս, դա այլ հարց է: Առավել էական է երկու հանգամանք:

Նախ՝ պատրա՞ստ է նույն Արեւմուտքը ավելի խորացված հարաբերություններ հաստատելու Ադրբեջանի հետ: Մի երկրի հետ, որտեղ ոտնահարվում են արեւմտյան արժեքները՝ ժողովրդավարությունը, հանդուրժողականությունը, մարդու իրավունքները, որտեղ կոռուպցիան համատարած է: Երկրորդ՝ Ադրբեջանի իշխող վարչախումբը պատրա՞ստ է հանուն Արեւմուտքի հետ հարաբերությունների խորացման ԼՂ խնդրի «արդարացի լուծման» անցնել իր բաժին ճանապարհը՝ իրականացնել արմատական բարեփոխումներ, ազատականացնել քաղաքական համակարգը, վերացնել կոռուպցիան եւ այլն, եւ այլն:

Բռնապետական-դինաստիական ռեժիմը չի կարող լինել Արեւմուտքի դաշնակից: Իսկ Ադրբեջանն էլ իր հերթին չի կարող լինել դեմոկրատական երկիր: Սա արդեն վարչախմբի ընտրությունը չէ, այլ՝ դաժան իրականություն, որի դեմ Գուլուզադեի «գունավոր» երազանքը ոչինչ է: Քանի որ դեմոկրատիան հակացուցված է մի երկրի, որն ի սկզբանե արհեստածին լինելով, ամեն պահի կարող է մասնատվել «մի քանի խանությունների, հենց որ փադիշահի» իշխանությունը թուլանա:

Շուտով 20 տարին կլրանա, ինչ Ադրբեջանում վերստին իշխում է Ալիեւների կլանը: Ինչքա՞ն ժամանակ եւս կպահանջվի, որպեսզի «ադրբեջանիզմի ոգով ձուլվի մարդկանց պատմական նոր հանրություն»՝ Ադրբեջանի քաղաքացիներ, դժվար է գուշակել: Եվ կհաջողվի՞ արդյոք: Դա էլ հարց է: Սա է ադրբեջանական իրականությունը: Եվ այդ իրականության գիտակցմամբ է նաեւ, որ իշխող վարչախումբը «սանձերը» մինչեւ վերջ ձգած է պահում: Գուլուզադեն նաեւ չպետք է մոռանա, որ, այո, վարչախումբն իր «արդար» փողերն աշխատում է Արեւմուտքի հետ, բայց նրա արմատները Ռուսաստանում են...

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

Դասընթացները կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի անունով (ձեւ 1, լրացվում է տեղում).

2) 3x4 չափի 2 լուսանկար.

3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը 2 օրինակ.

4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը 2 օրինակ.

5) անձնագրի պատճենը 2 օրինակ.

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը) 2 օրինակ.

7) «Անելիք բանկ» ՓԲԸ-ում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 11800033791500 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների իսկությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տեւողությունը 15 օր է՝ 90 ժամյա տեւողությամբ: Վերապատրաստման դասընթացի արժեքը 55.000 ՀՀ դրամ է՝ առանց ճաշի եւ սուրճի ընդմիջման:

Դասընթացները կվարեն տնօրենների վերապատրաստման մեծ փորձ ունեցող մասնագետները:

Դիմումներն ընդունվում են ս.թ. մարտի 11-ից 25-ը:

Դասընթացները սկսվելու են ապրիլի 1-ից եւ ավարտվելու են ապրիլի 15-ին (ներառյալ շաբաթ եւ կիրակի օրերը):

*Երեւան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2-րդ հարկ, 215 սենյակ, ամեն օր՝ ժամը 900-ից 1630-ն: Հարցերի դեպքում զանգահարել՝ 010-59-70-29, կամ գրել հետեւյալ էլ. փոստով՝ intercoop85@mail.ru.*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 6.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: